

ԹՈՒՐԵՒՆ

ՏԵՐՎԻՇ ԱՌԱՅԺՄ ՉԻ ԾՐԱԳՐԵՐ ՄԻԱՆԱԼՈՒ ՈՐԵԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

Թուրքիոյ տնտեսութեան հրաժարեալ նախարար Բեմալ Տերվիշ երէկ ի վերջոյ յայտարարեց, թէ առայժմ չի ծրագրեր որեւէ կուսակցութեան միանալ, սակայն յայտնելով, որ պիտի շարունակէ 3 Նոյեմբերի կանխահաս ընտրութեան գծով քաղաքական բանալի դեր խաղալ: Միւս կողմէ, Տերվիշ յայտնեց նաեւ, որ պիտի գործակցի կեղրոնի ձախ «Հանրապետականներու կուսակցութեան» հետ եւ պիտի չմիանայ արտաքին գործոց նախկին նախարար Իսմայիլ ձէմի «Նոր Թուրքիա» կուսակցութեան:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԱՅԼ ՀԵՂՈՒԵՒ ՄԷՁ ԵՐԷԿ ՏԻՐԵՑ ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՆԳԱՐՏՈՒԹԻՒՆ

Այն Հելուէ գաղթականային մէջ զգուշաւոր եւ յարգեցողական «Հանդարտութիւն» տիրեց երէկ, շնորհիւ նախանցեալ օր պաղեստինեան տարբեր խմբաւորումներուն միջեւ գոյացած համաձայնութեան:

Սայտայի մէջ Ֆաթհ կազմակերպութեան պատասխանատու Նալէտ Արէֆ երէկ տուաւ մամուլոյ ասուլիս մը, որուն մէջ յայտարարեց, թէ յիշեալ համաձայնութիւնը կայացած է կանխարգիլելու համար ներքին հարցերու լաւելեալ վատթարացումը: Ան դրուատիքով խօսեցաւ Սայտայի «զգալի եւ իսլամական ուժեր»-ը, ինչպէս նաեւ Լիբանանի զինուորական մարմիններուն ու ապահովական սպասարկութիւններուն դերակատարութեան մասին, որ ցոյց տուաւ, թէ անոնք նախանձախնդիր են գաղթականային խնայելու լաւելեալ արինահանգումներին:

Այն Հելուէ գաղթականային մէջ Ֆաթհի կեղրոնատեղիին դիմաց նստացոյց մը կատարուեցաւ երէկ, կազմակերպութեամբ գաղթականային ժողովուրդին յանձնարուածներուն ու Պաղեստինի Ազատագրութեան կազմակերպութեան անդամ ուժերու: Ցոյցը զօրակցութիւն կը յայտնէր Իսրայէլի կողմէ բանտարկուած Մարուան Պարզութի, կը դատապարտէր Իսրայէլեան ուժերը եւ զօրակցութիւն կը յայտնէր ինքիֆտալիս: Այսուհանդերձ արտասանուած խօսքերը ծանրացան գաղթականային մէջ վերջին դէպքերուն վրայ, դատապարտելով «Քիֆան Մուսալլահ»-ի վրայ յարձակումը եւ պահանջելով լիբանանեան իշխանութիւններուն յանձնել յանցագործները, որպէսզի գաղթականային մէջ ապահովութիւնը վերահաստատուի:

Սայտայի կրօնաւորներէն շէյխ Մահմադ Համմուտ երէկ ձայնասփոռած հարցազրոյցի մը մէջ յայտնեց, որ գաղթականային իսլամական ուժերը, ներառեալ Անսար խմբակը, կ'աշխատին լուծում մը գտնելու «Տընիթի խմբակի հարց»-ին: Չեմ կրնար հաստատել կամ հերքել այն տեղեկութիւնները, թէ համաձայնութիւն գոյացած է երկու շարքի միջեւ գաղթականային զուրս բերելու Տընիթի խմբակի այն անդամները, որոնք պահանջուած են լիբանանեան իշխանութիւններուն կողմէ, ըսաւ ան:

Նախանցեալ գիշեր, պաղեստինեան խմբակցութիւններու ներկայացուցիչները, գլխաւորութեամբ Լիբանանի մէջ Ֆաթհի ղեկավար Սուլթան Ապուլ Այնէյնի, գումարած էին ժողով մը եւ որոշած՝ 15 օր տնային կալանքի տակ պահել «Տընիթի»-ի անդամները, ապա զանոնք արտաքսել գաղթականային:

ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ ՓՏԱԾՈՒԹԵԱՆ ԴԷՄ ԲԱՅԼԵՐ Կ'ՈՐԴԵԳՐԵ ՅԱՅՏԱՐԱՐԵԼՈՎ ԵԼԵՄՏԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄՆԵՐՈՒ ԾՐԱԳԻՐ ՄԸ



Պաղեստինցի երիտասարդներ կը քարկոծեն իսրայէլեան հրասայլ մը, որ Այսրյորդանացի փողոցներէն կ'անցնէր

Պաղեստինեան իշխանութիւնը ելեւմտական մարտի մէջ բարեկարգումներու ծրագիր մը յայտարարեց երէկ: Ելեւմուտքի նախարար Սալամ Ֆայէատ ըսաւ, որ ընկերութիւնը մը յառաջացուած է միատեղ համախմբելու եւ հսկելու պաղեստինեան իշխանութեան բոլոր հաշիւներուն: Փտածութեան դէմ որդեգրուած այս քայլը կրնայ որոշ գոհացում մը տալ Ուաշինկթընի, որ արմատական բարեկարգումներ պահանջած է պաղեստինեան իշխանութենէն:

Միացեալ Նահանգներ պաղեստինեան անկախ պետութեան մը հռչակումը կը պայմանաւորեն փտածութեան դէմ պայքարով, ղեկավարութեան փոփոխութեամբ եւ ծայրայեղականներու սանձումով:

Իսրայէլի եւ պաղեստինցիներուն միջեւ բանակցութիւնները յանգած են համաձայնութեամբ, որուն լոյսին տակ, Իսրայէլ

վերջապէս հասնուորին տուաւ «ապատարձակելու» տուրքերէ գոյացած գումարներ, որոնք իբրեւ «պատիժ» ստեղծուած էին իսրայէլեան կառավարութեան կողմէ:

Ելեւմտական բարեկարգումներու յայտարարութիւնը եւ տուրքերէ գոյացած գումարները վերա-

դարձնելու խոստումը յոյս կը ներշնչէ այլ հարցերու մասին բանակցութիւնները շարունակելու:

Մինչ այդ սակայն բախումներ կը շարունակուին: Իսրայէլեան բանակին բանաբերը յայտնեց, որ Չոքըրքանիէն Հինգշաբթի լուսոցող գիշերուան ընթացքին 18

պաղեստինցիներ ձերբակալուած են. անոնք ենթադրաբար ծայրայեղականներ են:

Ֆայէատ յայտնեց, որ պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասէր Արաֆատ պաշտօնապէս հաւանութիւն տուած է ստեղծելու Պաղեստինեան Ներդրումներու Ֆոնդը, որ պիտի դրուի ելեւմուտքի նախարարութեան նուիրուած փամփոռ տնէրէն ուղղակի հակակշիռին տակ: Ֆայէատ ակնարկեց, որ նոր ընկերութիւնը պիտի ներառէ իսրայէլեան թափափուցիկութիւնը եւ հաշիւտուութիւնը պաղեստինեան իշխանութեան ելեւմտական բոլոր ձեռնարկութիւններուն: Ֆայէատ Իսրայէլի պահանջեց անմիջապէս յանձնել տուրքերէն գոյացած գումարները, որպէսզի կարելի ըլլայ վերադարձնել պաղեստինեան տնտեսութիւնը:

Իսրայէլի ելեւմուտքի նախարարութիւնը սկսած է յանձնել 425 միլիոն տոլարին մէկ մասը: Արտաքին գոր-

ծոց նախարար Շիմոն Փերէս խոստացաւ շուտով 15 միլիոն տոլար փոխանցել պաղեստինեան իշխանութեան ելեւմուտքի նախարարութեան:

Միւս կողմէ, մարդկային իրաւանց պաշտպան իսրայէլեան շարժում մը վերջուտին Իսրայէլը ամբաստանեց պաղեստինցի քաղաքայիններ իբրեւ «մարդկային վահան» գործածելու յանցանքով: Ծարժումը կ'ամբաստանէ բանակը, որ յաճախ իսրայէլացի պիտուորները վտանգէ հեռու պահելու համար կը վտանգէ պաղեստինցի քաղաքայիններու կեանքը:

Պաղեստինցի կանաւետներ յայտնեցին, որ 19 տարեկան Նիտալ Ապու Միխասին կալ իրաւապաշտներու տարաքի մը տակ, երբ պիտուորներ պարտադրեցին, որ ան մօտենայ ու պարնէ դուրս կարանի մը, որ ենթացող Պաղեստինեան Ներդրումներու Ֆոնդը, որ պիտի դրուի ելեւմուտքի նախարարութեան նուիրուած փամփոռ տնէրէն ուղղակի հակակշիռին տակ: Ֆայէատ ակնարկեց, որ նոր ընկերութիւնը պիտի ներառէ իսրայէլեան թափափուցիկութիւնը եւ հաշիւտուութիւնը պաղեստինեան իշխանութեան ելեւմտական բոլոր ձեռնարկութիւններուն: Ֆայէատ Իսրայէլի պահանջեց անմիջապէս յանձնել տուրքերէն գոյացած գումարները, որպէսզի կարելի ըլլայ վերադարձնել պաղեստինեան տնտեսութիւնը:

Իսրայէլի ելեւմուտքի նախարարութիւնը սկսած է յանձնել 425 միլիոն տոլարին մէկ մասը: Արտաքին գոր-

(ՌՈՅԹԸՐԸ)

ՍԱՏՏԱՄ ՀԻՒՄԷՅՆԻ ԴԷՄ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆ ՄԸ ՉԵՌՆԱՐԿԵԼԷ ԲԱՅԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔ ԶՈՒՆԻՆՔ

ԿԸ ՅԱՅՏԱՐԱՐԵ ԲՈՆՏՈՒՅԱ ՈԱՅՍ

Միացեալ Նահանգներ Իրաքի նախագահ Սատամ Հիւսէյնի դէմ գործողութեան մը ձեռնարկելէ բացի այլընտրանք մը չունին, յայտարարեց Սպիտակ Տան ազգային ապահովութեան հարցերու խորհրդատու Քոնտրիգա Ռայս: Ան ակնարկեց, որ նախագահ ձորճ Պուշ տակալին չէ որոշած, թէ ինչպէս եւ ինչ միջոցներով գործադրուած պիտի ընէ ծրագիրը:

Ռայս, որ կը պատասխանէր «Պի. Պի. Սի.»-ի թղթակցի մը հարցումներուն, դիտել տուաւ, որ Ուաշինկթըն չի կրնար բան մը ընել եւ կը հաւատայ, թէ վարչակարգի փոփոխութիւնը հրամայական է Իրաքի մէջ: Ռայս ըսաւ նաեւ, որ Սատամ երկու անգամ գրեթէ հասած էր կորիզային զէնքեր ունենալու մակարդակին: Սպիտակ Տան խորհրդատու ակնարկեց, որ Սատամ չար մարդ մըն է, որ եթէ ազատ ձգուի՝ չարիք պիտի պատճառէ իր ժողովուրդին եւ դրացիներուն: Իսկ եթէ հաւաքական քանդումի զէնքեր ունենայ՝ ամբողջ աշխարհին համար փորձանք պիտի դառնայ:

«Յայնեւ ըլլ թայմ» երէկ հաղորդեց, որ Ուաշինկթըն կողմէ կ'որոշէ մարդասիրական օժանդակութիւններու կազ-



Ընտրողիկա Ռայս

մակերպութիւններու, որպէսզի պատրաստուին գործելու Իրաքի եւ անոր շրջակայքը (հաւանաբար զինուորական գործողութեան ակնարկին): Օրաթերթը ակնարկեց, որ տեղեկութիւնները ստացած է արտաքին գործոց նախարարութեանէն:

Ամերիկեան պաշտօնական քաղաքականութիւնը վարչակարգի փոփոխութիւն է Իրաքի մէջ, թէեւ Պուշ եւ բարձրաստիճանի պաշտօնատարներ կը պնդեն, որ տակալին հաստատ որոշում մը չկայ զինուորական գործողութեան մը մասին:

ԻՐԱՔ ՊԱՏՐԱՍ Է ՄԱԿԻ ՇԵՑ ԲԱՆԱԿՑԵԼՈՒ

Իրաքի տեղեկատուութեան նախարար Մոհամէտ Սայիտ Սահաֆ յայ-

տարարեց, որ Պաղեստին պատրաստ է բանակցութիւններ կատարելու ՄԱԿի հետ, զէնքերու քննութիւններուն եւ այլ հարցերու մասին, հակառակ ամերիկեան միջամտութեան:

Սահաֆ, որուն հարցազրոյցը կը պատկերասփռուէր «Ժապիրա» կայանէն, ըսաւ, որ Իրաք պատրաստ է լայնամտութեամբ մօտենալու բոլոր հարցերուն: Ան շեշտեց, որ ՄԱԿի եւ Իրաքի միջեւ երկխօսութիւնը հաստատ պահելու անհրաժեշտ է, որովհետեւ տիպիկը միայն զէնքի քննիչներուն վերադարձին չ'առնչուի, ինչպէս որ կը կարծեն շատեր: Սահաֆ քննադատեց Միացեալ Նահանգները, դիտել տալով, որ անոնք կը տիրա-

Ծար-ը էջ 3

Արդեն շուկային վրայ է միջազգային հռչակ վայելող հայկական «KOTAYK» գ ա Ր Ե ջ Ո Ր Ը : «KOTAYK» գարեջուրը շահած է 3 ոսկի մետալներ՝ ՍՈՉԻ, ՄԱՏՐԻՏԻ եւ ՄՈՍԿՈՒԱՅԻ միջազգային փառատօներուն ընթացքին, իսկ Նիւ Եորքի մէջ տիրացած է «PLATINUM» մ Ե Տ Ա Լ Ի Ն : «KOTAYK» գարեջուրը կրնաք գտնել բոլոր սիւփերմարքէթներուն եւ նպարավաճառներուն մօտ: Մեծաքանակ վաճառքի համար կրնաք դիմել «UNIVERSE» հաստատութեան կամ ցրուիչ «VAK TRADING COMPANY»-ի: Ըացտ՝ Պուրճ Ըամուտ, Փօլիկարպոս, «Սարդարապատ» շէնք: Ըեռաձայն՝ 03/626177, 03/773609:

Ընդհանուր ներկայացուցիչ Լիբանանի մէջ «LEBARCO» ընկերութիւն «LEBANESE ARMENIAN COMMERCIAL COMPANY»:

ՃԱՇԱՐԱՆ ՌԻԱՏԻ ԷԼ ՍԱՄԱՐ

(Ժայռ էլ Պաղոթ, Պաղիմն դեպի Պրումանայի ձամբուն վրայ)

ԳԵՂԱՏԵՍԻԼ ՎԱՅՐ, ԵԱՌԱՋԱՐԳ, ՀԱՆԴԱՐՏ ՄԻՋԱՎԱՅՐ ԵՒ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՄՅՆՈՒՈՐՏ

● Միշտ առատ եւ թարմ աղանդեր, համադամ ձաշեր, սակ մէկ անձի 8\$: Խմիչքը՝ ըստ ապսպրանքի:

● Հայկական, արաբական եւ եւրոպական երաժշտութիւն:

● Ամեն շաբաթ երեկոյնը յատուկ յայտագիր հանրածանօթ երգիչներու եւ նուագախումբի ընկերակցութեամբ եւ մասնակցութեամբ արաբական պարուի:

● Փոքրերու յատուկ խաղաղալար:

● Կը ստանձնենք միութեանական եւ անձնական խրախմբները յարմար գիներով:

ՄԱՆՕԹ - 3 տոնուկ ձաշացոյցով, 27 տեսակ բաց աղանդեր, բաց խորոված, բաց խմիչք՝ օդի, գարեջուր եւ զովացուցիչ:

Մէկ անձի համար միայն 17\$: Ըեռաձայն. 04 - 808707 եւ 03 - 360667:

ԼԻՔԱՆԱՆԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ ՍԱՌԱԾ՝ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐՈՒ ՊԱՏՃԱՌՈՎ

Ս. Աստուածածնի վերափոխման տօնին առիթով երկուսն Կեանքի արձակուրդին կողքին, երկն և Կեանքի արձակուրդը, որ պիտի տեւի մէկ ամիս, մինչեւ Սեպտեմբեր 15:

Վարչապետ Ռաֆիք Հարթիքի եւ երկն մէկ շաբթուան արձակուրդ առաւ եւ մեկնեցաւ արտասահման: Իրենց արձակուրդը նոյնպէս արտասահման պիտի անցնեն եւ Նախարարներ:

Այս տուեալներուն բերմամբ քաղաքական բեմն ալ համեմատական արձակուրդի մէջ էր երկն եւ բացի Ս. Աստուածածնայ տօնին առիթով արտասահման քաղաքներու քաղաքական բովանդակութիւններէն, քաղաքական յատկանշական շարժում չարձանագրուեցաւ ներքին բեմին վրայ:

● ՉԱԼԷԻ, Ֆրոնտի եւ Պեքայի յոյն կաթողիկէներու առաջնորդ Անտոն Հատատ խիստ քննադատութիւններ ուղղեց իշխանութիւններուն եւ կոչ ուղղեց իշխանաւորներուն, պետական ու քաղաքական պատասխանատուներուն եւ ժողովուրդին՝ միասին աշխատելու, պահպանելու համար

հայրենիքէն մնացածը, այլապէս ամբողջովին պիտի կորսնցընենք պայն:

Երկն Չախլի Ս. Աստուածածին եկեղեցին մէջ արտասահման իր քարոզչին մէջ ան պահանջեց մոռնալ տարակարծութիւններն ու տեղայնական, կուսակցական եւ այլ բնոյթի թշնամութիւնները եւ համախումբ գործել իշխանութեան հետ՝ երկրին փրկութեան համար:

«Մեր իշխանաւորները շեղած են արդար եւ խղճմտ իշխանութիւններու ուղիէն եւ կը չափազանցեանք քաղաքացիները նուազացնելու եւ ամենէն տարակալ իրաւունքներէն կրկնելու իրենց կեցուածքը: Անոնք նաեւ չափը անցուցին մսխելով ժողովուրդին իրաւունքը հանդիսացող պետական գումարները, ժողովուրդը աղքատ դարձուցին՝ հետապնդելով իրենց անձնական շահերը. անոնք ժողովուրդը տուրքերով ծանրաբեռնեցին, առանց ունենալու գիտական յստակ ծրագիր՝ տնտեսութեան վերականգնումին եւ պարտքերու վճարումին համար», ըսաւ ան:

● ՍՖԵՅՐ ՎԱՍՏԻՆՆԵՐԻՆԻ ՆԱՍՐԱՅԻ ԳՈՐԹՈՍ ՍՖԵՅՐ ՎԱՍՏԻՆՆԵՐԻՆԻ

երկն Տիմանի մէջ հանդիսացան Ս. Աստուածածնայ վերափոխման տօնին առիթով մատուցուած պատարագին եւ անոր ընթացքին արտասահման քարոզչին մէջ վեր առաւ Ս. Աստուածածնայ տարակարծութիւններն ու արձակուրդները, եւ կոչ ուղղեց մայրերուն՝ հետեւելու անոր օրինակին: «Ան բոլորիս պահպան մայրն է», ըսաւ ան, եւ հաւատացաւ ներուն կոչ ուղղեց սիրով եւ բարեացակամութեամբ վարուելու իրարու հետ:

Պատարագէն ետք ՍՖԵՅՐ ընդունեց Հատուցի գիւղէն պատուիրակութիւն մը, որ գանձաւարեաց շինարարութեան արտօնագիրներու շնորհով գտնուած քաղաքացիականութեան խորհուրդին հարցերէն: ՍՖԵՅՐ ցաւ յայտնեց գիւղին մէջ քաղաքացիական խորհուրդին գերադաս իշխանութիւններու գոյութեան եւ անոնց կողմէ խորհուրդի որոշումներու շրջանցումին համար: Իշխանութիւնները պետք է յարգեն պիտար եւ գերադասները պետք է յարգեն ստորադասներուն իրաւասութիւնները, ըսաւ ան, յոյս յայտնելով, որ այս հարցերը կը յաղթահարուին:

ԹԱԼԱԼ ԱՐՍԼԱՆ ԿԸ ԿԱՏԱՐԵ ԶԳԱՅԱՅՈՒՆՑ ԶԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լիբանանի մէջ համայնքայնութիւնը աւելի տարածուած է արմատացած է, հաստատեց պետական նախարար Թալալ Արալան «Տապալուր» օրաթերթի Ուրբաթ օրուան համարին մէջ լոյս տեսնող հարցազրոյցի մը մէջ եւ ցաւ յայտնեց, որ ինք նախարար է տիրույթի ըլլալուն համար եւ ոչ թէ կուսակցական եւ ազգային դերակատարութեան բերմամբ: Սիւլայ պիտի ըլլայ երկար տեւողութեան վրայ շարունակել թափախահմանադրութեան գործադրութիւնը, ըսաւ Արալան, դիտել տալով, որ թափախահմանադրութեամբ բոլոր իսլամ համայնքները բարելաւեցին 1943ի սահմանադրութեան բաղադրատու իրենց դիրքը, բացառութեամբ տիրույթի համայնքէն:

Արալան վարմանք յայտնեց Լիբանանի քաղաքական վարչաձեւի մեքանիզմին համար եւ հաւաստեց, որ իշխանութեան եռակի դրութիւնը վերջ կը գտնէ միայն այն առեւ, երբ նախարարաց խորհուրդը ինքնիշխան կ'ըլլայ. «Ես կառավարութեան անդամ նախարար մըն եմ. այսուհանդերձ ինձի արգիլուած է տեսնել նախարարաց խորհուրդի նիստի առեւազրութիւնը, եւ կամ նիստին ընթացքին արժարծել որեւէ հարց», ըսաւ ան:

Արալան յայտնեց, որ իր հայրը, հանգուցեալ իշխան Մաժիտ Արալան իրեն ըսած է. «Բերձախարհի մեծագոյն երկրին յաւաքոյն սահմանադրութիւնը եւ պայն որդեգրէ Լիբանանի մէջ. կը տեսնես, որ կը խանգարեն պայն»:

«Լիբանանի մարտնիւնները կը շարունակեն հաւատալ, որ երբեմն իրենց պահպան Ֆրանսիայի փոխարինուած է Միացեալ Նահանգները», դիտել տուաւ ան:

ԻՐԱՆԻ ԴԵՄՊԱՆԸ՝ ՇԷՅՆ ՔԱՊԱԼԱՆԻ ՄՕՏ

Շիիներու գերագոյն խորհուրդի նախագահ Շեյխ Ապտի Ամիր Քապալան երկն ընդունեց Լիբանանի մէջ Իրանի դեսպան Մոհամէտ Ալի Սուպհանիի հրաժեշտի այցելութիւնը:

Շեյխ Քապալան դրուատիքով խօսեցաւ Սուպհանիի գործունէութեան մասին, հաստատելով, որ անոր օրով Իրանի հետ յարաբերութիւնները կարեւոր տարողութիւն ստացան եւ Իրան կամուրջներ նետեց լիբանանեան բոլոր կողմերուն հետ: Իրան խորհուրդին չէ դրած լիբանանեան կողմերուն միջեւ եւ անոր այս կեցուածքը անկիւնադարձային նշանակութիւն ունեցաւ երկու ժողովուրդներու յարաբերութեան ամրապնդումին մէջ, ըսաւ ան:

Իրան մարմնացումն է աշխարհի իսլամներու յոյսերուն եւ ձգտումներուն, իսկ անոր փառքն ու յաղթանակը բոլորիս յաղթանակն է, ըսաւ Շեյխ Քապալան, դիտել տալով, որ թշնամի Միացեալ Նահանգներն ու Իսրայէլը կ'ուզեն տապալել շրջանի բոլոր ուժերը, եւ ոչ միայն Իրաքը, որ պէսպի պատօրէն շահագործեն շրջանի հարստութիւնները:

Իրանի դեսպանը ըսաւ, որ հրաժեշտի այս այցելութիւնը յատուկ նշանակութիւն ունի, որովհետեւ Շեյխ Քապալանի շնորհակալութիւն յայտնեցի կեցութեան ընթացքին անոր ջերմ պագումներուն, պրակցութեան եւ թանկագին իրատներուն համար:

«Մեզի համար շիիներու գերագոյն խորհուրդը Լիբանանի շիիներու պաշտօնական կարեւորագոյն հաստատութիւնն է, որ արդիւնքն է իմամ Մուսա Սատրիի ճիգերուն, եւ իմամ Սատրը ինչեցնելու կողքին, անկախ նաեւ կը լինեցնէ իմամ Մոհամէտ Մեհուի Շամսէտտինը:

ՊԱՏԲԵԹՊՈՒԻ ՄԵՐՁԻԿՆԵՐՈՒՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԵՆՏՐՈՆԻ

ՆԱԽԱՐԱՐ ՅՈՎՆԱՆԵԱՆ ԿԸ ՀԱՄԱՍՏ, ՈՐ ՄԻՋԱՍՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՆ

Երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեան երկն ձայնափողուած հարցազրոյցի մը մէջ հաւաստեց, որ պետութիւնը ճիգ չի խնայեր ապահովելու Լիբանանի պատերազմի ազգային խումբի անդամ երեք մարտիկներու մասնակցութիւնը Իսրայէլի մէջ կայանալիք աշխարհի ակոյեանութեան մրցումներուն:

Նախարար Յովնանեան յայտնեց, որ հաղորդակցութիւնները բարձրագոյն մակարդակի վրայ կը շարունակուին այս նպատակով եւ յատուկ ճիգ չի գործ կը ընէ նաեւ վարչապետ Ռաֆիք Հարթիք:

Նշենք, որ Միացեալ Նահանգներ մերժած են վիզա տալ խումբին երեք մարտիկներուն:

ՏՕՆ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ Ս. ԱՍՏՈՒՎԾԱԾՆԻ ԵՒ «ՈՒՒՏԻ ՕՐ» ՊԻՔԵԱՅԱՅՈՒՆ

Տարիներու աւանդութեան համաձայն, այս տարի եւս հանդիսաւոր շուքով պիտի նշուի Սուրբ Աստուածածնի վերափոխման տօնը եւ պիտի կատարուի Պիքեայայի մատարան ուխտագնացութիւնը:

Այս առիթով մեր ուխտաւոր հաւատացեալներուն կը ներկայացնենք Ուխտի Օրուան կապուած հետեւեալ ժամանակացոյցը:

ՈՒՐԲԱԾ. 16 ՕԳՈՍՏՈՍ 2002

- Աղի օրհնութիւն եւ ոչխարներու զենում, առաւօտեան ժամը 10:00ին:
- Երեկոյեան ժամերգութիւն, կէսօրէ ետք ժամը 5:00ին:
- Նկարներու օժնում, ժամը 5:30ին:
- Այցելութիւն վեհափառ հայրապետին եւ Աջահամբոյր՝ բոլոր հաւատացեալներուն համար, երեկոյեան ժամը 8:00-9:00:
- Գեղարուեստական յայտագիր վանքի շրջափակին մէջ, իրիկուան ժամը 9:00ին: Ելոյթ կ'ունենան Սոնիկ Փամպուրեան եւ Մանուկ Մինասեան:
- Երեկոյեան եւ հոգեւոր խորհրդածութիւն եկեղեցւոյ մէջ, իրիկուան ժամը 11:00-12:00:

ՇԱՐԱԾ. 17 ՕԳՈՍՏՈՍ

- Գիշերային ժամերգութիւն, առաւօտեան ժամը 8:00ին:
- Առաւօտեան ժամերգութիւն, առաւօտեան ժամը 10:00ին:
- Ճաշու ժամերգութիւն, կէսօրուան ժամը 12:00ին:
- Երեկոյեան ժամերգութիւն, կէսօրէ ետք ժամը 4:00ին:
- Գիշերային ժամերգութիւն, երեկոյեան ժամը 6:00ին:
- Սուրբ եւ անմահ պատարագ, երեկոյեան ժամը 7:30ին, եկեղեցւոյ շրջափակին մէջ:

Պիտի պատարագ է պիտի քարոզէ՝
ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ
 (Առաջնորդ Լիբանանի Հայոց թեմի)

Արարողութեանց պիտի նախագահէ եւ ժողովուրդին իր պատգամը պիտի փոխանցէ՝
Ն. Ս. Օ. Տ. Ս. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ

Յաւարտ Սուրբ եւ անմահ պատարագի տեղի պիտի ունենայ խաղողի եւ մատաղի օրհնութիւն, հանդիսապետութեամբ վեհափառ հայրապետին:

Պատարագին երգեցողութիւնը պիտի կատարէ՝
«ՇՆՈՐԽԱԽ» երգչախումբը, ղեկավարութեամբ՝
ՎՊԵ. Ս. ՄԵՐՈՒԿ Ե. ՎՊԵ. ԲԱՐԻՔԵԱՆԻ
ԿԵՐԱԿԻ. 18 ՕԳՈՍՏՈՍԻՆ.

- Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ պիտի պատարագէ եւ պիտի քարոզէ՝
ԳԵՐՇ. ՏԻՐԱՅՐ ԵՊՍ. ՓԱՆՈՍԵԱՆ

Արարողութեանց պիտի նախագահէ
Ն. Ս. Օ. Տ. Ս. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Յաւարտ Սուրբ եւ անմահ պատարագի, տեղի պիտի ունենայ խաղողի օրհնութիւն արարողութիւն:

ԵՐԱՅՈՒՆԱՔԹԵ. «ՄԵՆԵԼՈՑ ՕՐ» 19 ՕԳՈՍՏՈՍ

- Տեղի պիտի ունենայ Ս. պատարագ եւ հոգեհանգստեան պաշտօն Ս. Աստուածածնայ մատարան մէջ:

* * *

Բոլոր այն հաւատացեալները, որոնք կը փափակեն մատաղու ոչխար (արու), խաղող եւ կամ մատաղազին նուիրել, թող բարեհաճին ներկայանալ կաթողիկոսարան, Անթիլիաս կամ Պիքեայայ, ամէն օր առաւօտեան ժամը 8:30էն երեկոյեան ժամը 5:00, եւ իրենց նուէրները յանձնել **ՀՈԳՇ. Տ. ՍԻՓԱՆ ՎՐԴ. ՔԵՉԵՃԵԱՆԻ** կամ **ՀՈԳՇ. Տ. ՍԱԿԱՐ ԱՐԶ. ԱՇԳԱՐԵԱՆԻ**, Անթիլիաս, եւ **ՀՈԳՇ. Տ. ՅՈՒՍԵՒՆ ՎՐԴ. ՍԱՐՏԻՐՈՍԵԱՆԻ** Պիքեայայ:

Բոլոր մատաղու ոչխարները պէտք է Պիքեայայ հասած ըլլան առաւելագոյնը մինչեւ Ուրբաթ, 16 Օգոստոս, առաւօտեան ժամը 9:00:

* * *

Կոչ կ'ուղղենք հաւատացեալ մեր ժողովուրդին, Ս. Աստուածածնայ տօնին առիթով ուխտի գալու Պիքեայայ Ս. Աստուածածնի եկեղեցին եւ վերանորոգելու իր քրիստոնէական հաւատքը:

ՄԱՀԱԶԴ

Օր. Զարուկ եւ տիար Վարուժ Շիրազմեաններ
 Տէր եւ տիկին Սեւ Իշխանեան
 Տէր եւ տիկին Սեւան Ալեքսանտրեան եւ զաւակունք
 Տէր եւ տիկին Սեթ Իշխանեան
 Տէր եւ տիկին Լենի Պիշոբի եւ զաւակը
 Շիրազմեան ընտանիք
 Գանթարճեան ընտանիք
 Գալիփաճեան ընտանիք
 Պոյաճեան ընտանիք
 Թուղլաճեան ընտանիք
 Քիւլէճեան ընտանիք
 եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր, մեծ մօր, զոբանչին, մօրաքրոջ, հօրաքրոջ եւ հարազատին՝

ՎԵՐԳԻՆ ՇՄԸՐՏԸՄԵԱՆԻ
 (ՇՈՒՆԱԿ՝ ԳԱԼՓԱՔՃԵԱՆ)

մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 15 Օգոստոս 2002ի առաւօտեան:

Յուզարկաւորութեան եւ թաղման արարողութիւնը կատարուեցան նոյն օրը՝ Հինգշաբթի, 15 Օգոստոս, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Ֆրոնտ Երպպէթի Ազգային գերեզմանատան մատարան մէջ:

- Ներկայ ընդունիլ իբրեւ մահագր:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին ժաք Իշխանեանի բնակարանը, Մար Միայէլ, Ուրբաթ 16 եւ Շաբաթ 17 Օգոստոսին:

ՄԱՀԱԶԴ

Տիկին Ծովինար Գարակիւլլեան եւ զստերք՝ Մարի եւ Նարինէ
 Տէր եւ տիկին Յարութիւն Գարակիւլլեան եւ զաւակունք
 Տէր եւ տիկին Զաւէն Գարակիւլլեան եւ զաւակունք
 Տէր եւ տիկին Գրիգոր Էմրազեան
 Տէր եւ տիկին Սարգիս Էմրազեան եւ զաւակունք
 Տէր եւ տիկին Կարօ Մանուկեան եւ զաւակունք
 եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, եղբոր, փեսային, քեռայրին եւ հարազատին՝

ԴԱԻԹ ԳԱՐԱԿԻՒԼԼԵԱՆԻ
 (ՇՈՒՆԱԿ՝ Հալէպ, 1957ԻԳ)

մահը, որ պատահեցաւ Զորեքշաբթի, 14 Օգոստոս 2002, գիշերուան ժամը 9:00ին, Ժեհաթուի հիւանդանոցին մէջ:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Ուրբաթ, 16 Օգոստոս, կէսօրէ ետք ժամը 2:00ին, Նոր Ատանայի Ս. Աստուածածնի եկեղեցւոյ մէջ, ուր կ'ընդունուին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայ ընդունիլ իբրեւ մահագր:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Թրատ Թաղ, Ուրբաթ 16, Շաբաթ 17 եւ Կիրակի 18 Օգոստոսին:

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

● Գերգ Պոստոյեանի մահուան առիթով, տիկին Յամիկ Պոստոյեան կը կատարէ հետեւեալ նուիրատուութիւնները.

- Երանոցի՝ 300 \$
- Կուրանոցի՝ 100 \$
- Ս. Նշան Մայր եկեղեցւոյ Տիկնացի Միութեան՝ 200 \$
- Ծեմարանի «Սաներու Ֆոնտ»-ին՝ 200 \$
- ՈՒՍԻ «Ա. Պուլլուրճեան» ընկերաբժշկական կեդրոնին՝ 200 \$

Կը խնդրուի նուիրատուութիւնները ստանալ հեռաձայնելով 01-201937 քիւիմ:

ԿՈՒՅՈՒԻ

● Վայկական խմբիչի հաստատութիւն մը կարիք ունի երիտասարդ փորձառու ցրուիչ-վաճառող մը, որ ունենայ նաեւ ինքնաշարժ վարելու (ուժմով) արտօնագիր: Դիմել՝ հեռ. 03 - 626177 քիւիմ:

ԿՈՒՅՈՒԻ

● Ոսկերչական մոմի վրայ աշխատող փորձառու օրիորդ մը: Դիմել՝ հեռ. 03-375724:

ԿԸ ՓՆՏՈՒՄ

● Որդեգրուած ընտանիքի մը աղջիկն էմ, ծնած 11 Մայիս 1970, CMC հիւանդանոցը: Կը փնտռեմ ծնողքս եւ իմ մեծ մեծ քոյրերս եւ եղբայրներս (Պուրճ Համուտէն): Հեռ. 01 - 258308, երեկոյեան ժամը 8:00էն 10:00:

Khabbaz-Orient Plus
 Travel & Tourism

Varna

Starting from 350\$
 Including R/T ticket, 8 days bungalow, transfers, guides. Visa & taxes not included


Cyprus 3 days 185 \$
 Boat trip to Cyprus & Greece 380 \$

01.900598, 901598 - 02.258336, 256254
 www.orientplus.com

SALON MANO
 For Men & Kids

The right choice...

Bouj Hamoud
 Municipality Street
 Center Arine, 1st Fl.
 Tel.: 01/262181



Կոչ կ'ուղղենք հաւատացեալ մեր ժողովուրդին, Ս. Աստուածածնայ տօնին առիթով ուխտի գալու Պիքեայայ Ս. Աստուածածնի եկեղեցին եւ վերանորոգելու իր քրիստոնէական հաւատքը:

ԳԻՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

Միացյալ Մահաւագներ Եւ Դառնակաւներ

ՃԻՇՊ Ո՞Վ Է ԱՍԻԱՅԻ ԱՄԵՐԻԿԱՅԻՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ ՀԱՐԱՎԱՍԻԱՑԻՆԵՐՈՒՄ ԵՒ ԱՐԵԻԼԱՍԻԱՑԻՆԵՐՈՒՄ ԿՈՒ ՏԱՅ ԶԵՂԱՅԻՆ ՊԱՏԿԱՆԵԼԻՈՒԹԵԱՆ ՆՈՅՆ ԲՆՈՐՈՇՈՒՄԸ, ՈՐ ՅԱՅՆԱՊԵՍ ԿԻՃԵԼԻ ՊԻՏԱԿ ՍԵՆ Է: «ԵՈՒՆԱՅԹԸՑ ՓՐԵՍ ԻՆԹԵՐՆԵՇՆԸԸԸ» ԿԸ ԿԵՐԼՈՒԾԷ.

Ճիշդ ո՞վ է «ասիացի ամերիկացին»: Միացեալ Նահանգներու մէջ ցեղային պատկանելիութեան պաշտօնական բանաձեւումը քննադատելի կը համարուի շատ նեղ եւ շատ լայն ըլլալուն համար: Առաջին՝ որովհետեւ դուրս կը ձգէ արեւմտասիացիները, ինչպէս՝ արաբներ, իսրայէլացիներ եւ իրանցիներ, եւ երկրորդ՝ որովհետեւ կը մէկտեղէ Չինաստանի արեւելասիացիներն ու Ֆիլիպինցիները՝ Հնդկաստանի եւ Փաքիստանի բաւական տարբեր հարաւասիացիներուն հետ:

Գլխաւոր հարցը հարաւասիացիներուն կարգավիճակն է: Ներկայիս պետութիւնը հարաւասիացիները կը դասէ արեւելասիացիներուն շարքին, արուեստական ցեղի մը՝ «ասիացիներ» անունին տակ, փոխանակ հարաւասիացիները դասելու արեւմտափացիներու շարքին՝ կողմիակցեալ ցեղերու դասաւորումին մէջ:

Ցեղերու բաժանումի ամերիկեան պետական օրէնքներուն համաձայն, արեւմտեան Ասիոյ ծայրագոյն 2400 մղոնը «ասիական» է: Կաշնակցային կառուցութիւնը «ասիացի ամերիկացի» չի համարեր նոյնիսկ անոնք, որոնք եկած են Լիբանանէն, Սուրիայէն, Իրաքէն կամ Աֆղանիստանէն: Այս երկիրները ասիական են ցամաքամասին աշխարհագրական միջավայրին ընդունուած սահմանումին համաձայն: Սակայն հոն ծագում առած ամերիկացիները «սպիտակամորթ» կամ ճիւղկասացի» կը համարուին, հետեւաբար իրաւական պաշտպանութիւն չեն վայելեր իբրեւ անկատ փոքրամասնութիւն: Օրինակ, Նայթըր աշխարհագրական առումով ասիացի են, սակայն կը պատկանին կողմասեան ցեղին: Իրօք, Հայաստան կը գտնուի կողմասեան լեռնաշղթային հարաւային կամ ասիական կողմը, որ Եւրոպայի եւ Ասիոյ միջեւ սահման մըն է:

Միացեալ Նահանգներու կառավարումի եւ Պիտեքսական Գրասենեակին կողմէ հրապարակուած օրէնքներ, որոնք կ'օգտագործուին Մարդահամարի եւ Աշխատանքի Հաւասար Առիթներու Պատասխանատու Ցանձաժողովին կողմէ, բացայայտօրէն կը նշեն, թէ Ասիան իրականութեան մէջ կը սկսի Աֆղանիստանի եւ Փաքիստանի միջեւ տարածուող խաչկէրի անցքէն:

Այսուհանդերձ ամերիկացի դիւանակալներու կողմէ ճշգրտած ցեղային այս աշխարհագրական սահմանը իրականութեան մէջ աշխարհի ամէնէն բաց սահմաններէն մէկն է, ինչպէս ստիււումով կը հաստատեն թալիպան զինեալներու հետքը փնտրող ամերիկացի զինուորները: Աֆղանիստանի դէմ ամերիկեան յարձակումներէն խոյս տուող փաշտուց ցեղախումբն արեւմտարդիկ, որոնք թալիպան զինեալներու մեծամասնութիւնը կը կազմեն, բարձրացած են լեռները եւ անհետացած՝ Փաքիստանի փաշտուց զինուորներուն մէջ բնակող իրենց ազգականներուն քով:

Սահմանները արհամարհող փաշտուցները արտաբնասպէս դժուար կարելի է գանազանել արեւելասիացիներէն կամ նոյնիսկ հարաւարեւելքի եւրոպացիներէն: Հուշակաւոր փաշտուց մըն է կանաչ աչքերով այն աղբիւրը, զոր «Նէշընըլ Դեմոկրաֆիք» ամսաթերթին լուսանկարներէն մէկը յայտնաբերած էր Փաքիստանի մէկ գաղղկակայանի մէջ, 1986ին: Անոր համակող դիմանկարը թերթին բազմամեայ պատմութեան մէջ ամէնէն աւելի ժողովրդականութիւն վայելող լուսանկարն է: Այս աղբիւրը վերջերս դարձեալ յայտնուեցաւ, այս անգամ՝ Աֆղանիստանի մէջ, ուր կ'ապրի:

Թէեւ հնդկական ենթացամաքամասին ժողովուրդները մեծապէս իրարմէ կը տարբերին իրենց մորթի գոյնով, սակայն անոնք մեծամասնութիւնը կը կրէ կողմասեան դիմագիծի յատկանիշներ: Իրօք, Ամերիկա գաղթած հնդկներէն շատերը կը պատկանին կողմասեան յատկանիշներ կրող մեծամասնութեան, եւ ոչ թէ՛ Հնդկաստանի դժուար ճանաչելի ցեղախումբային մէկ փոքրամասնութեան: Աւելին՝ հնդկ ամերիկացիներուն մեծ մասը կը պատկանի հինտու վերնախաւին: Անոնք մասամբ սերած են հնդարբան արիական ցեղերէն, որոնք արշաւած են հիւսիս-արեւմուտքէն եւ հինտու կրօնն ու դասակարգային բաժանումը ներմուծած են Հնդկաստան: Նոյնիսկ այսօր բարձր խաւի պատկանող հինտուները աւելի բաց գոյնի մորթի ունին, քան՝ ցած խաւերու պատկանող հնդկները:

Հնդկներուն մեծամասնութիւնը կը խօսի հնդեւրոպական լեզու մը. բազմաճիւղ լեզուաընտանիք մը, որուն կը պատկանի նաեւ անգլերէնը: Պատմագէտներու համար տակաւին տարակարծութեան նիւթ է, թէ ուրկէ՞ ծագում առած է հնդեւրոպական ցեղը: Ենթադրութիւնները կեդրոնացած են Արեւելեան Եւրոպայի եւ Թուրքիոյ վրայ:

Սակայն հարաւասիացիներուն եւ արեւելասիացիներուն միջեւ տարբերութիւնները պնդելու են:

Հնդկաստանէն գաղթական մը՝ Տինէշ Տ'տուգա, որ հեղինակն է այս օրերուն մեծ ռոզովրդականութիւն վայելող «Ուաթք սօ օֆ Միջրը ըպաուք Ամերիքա» գիրքին, կ'ըսէ՝ «Կրէք Արեւելքի մշակոյթը կարգ մը նամուութիւններ ունի (կրօն, խոհանոց, երաժշտական եւ շարժապատկերի ճաշակ) ասիական-հնդկա-

կան մշակոյթին հետ, սակայն նմանութիւնները շատ քիչ են արեւելեան (Մայրագոյն Արեւելքի) մշակոյթին հետ»:

Միացեալ Նահանգներու Դաշնակցային կառավարութեան կողմէ հարաւասիացիներուն եւ արեւելասիացիներուն մէկտեղումը արդարացնող ամէնէն սովորական պատճառաբանութիւնը այն է, թէ պոռտոյալիստներուն ծնունդ առած է Հնդկաստանի մէջ: Սակայն այս կրօնը գրեթէ հետեւորդ չունի հարաւային Ասիոյ տարածքին:

Ամերիկա ծնած երրորդ սերունդի քրէտոցի ամերիկացի մը՝ Տոն Լի հասակ նետած է Թոքիոյի եւ Սէուլի մէջ, ուր հայրը ամերիկացի դիւանագիտական ներկայացուցիչ էր: Անոր մրցանակի արժանացած կարճ պատմը ուժեղեցրեց իր արժանացած կարճ պատմը՝ նաեւ Քալիֆորնիոյ մէջ երեւակայական գիւղաքաղաքի մը ասիացի ամերիկացի բնակիչներուն մասին: Թէեւ Լի հանգիստ կը զգայ գրելով բոլոր տեսակի արեւելասիացիներու մասին, ինչպէս նաեւ՝ անոնց նմանութիւններուն ու տարբերութիւններուն, սակայն ան կ'արհամարհէ ամերիկեան պետութեան կողմէ «ասիացի ամերիկացի» ընդարձակ բնորոշումը:

Լի Են-մամակ մը յղած է «Նուճալքըտ Ինթըր-Նէշընըլ Փրէս»ի, որուն մէջ կը գրէ հետեւեալը. «Բոլորս «ասիացի» կոչելու մղումը եւ թորէացիներէն մինչեւ փաքիստանցիները պարփակող նման ընդարձակ հասկացութեան մը օգտագործումը անիմաստ եւ ստորնացուցիչ կը թուի ինծի: Գործնական ոչինչ կայ տարբեր մշակոյթներէ եւ կրօններէ բաղկացած ամբողջ ցամաքամասի մը ժողովուրդները մէկտեղելու մէջ, մերժելով տեսնել անոնց տարբերութիւնները: Կը կարծեմ, որ ասիկա անարդար է եւ խորքին մէջ գաղութատիրական մօտեցում մըն է»:

Քուրդի Բալէճէն դասախօս մը՝ Փիոնկ կապ Մին, որ ուսումնասիրած է «ասիացի ամերիկացի» պիտակին ներկայութիւնը անձնական կեանքի մէջ, անդարդարձած է, թէ «անիկա քաղաքական բացատրութիւն մըն է, զոր կը գործածեն ասիացի ամերիկացի ազգային գործիչները, եւ որ շեշտաւորուած է պետութեան կողմէ: Ան կ'ըսէ. «Մշակութային, Ֆիզիքական յատկութիւններու եւ Ամերիկա գաղթելէ առաջ ապրուած պատմական փորձառութիւններու դիտանկիւնին համաձայն եմ, թէ հարաւասիացիներն ու արեւելասիացիները հասարակաց եզրեր չունին: Անոնք միջեւ կարելի է տեսնել բարեկամութեան, խառն ամուսնութիւններու կամ նոյն թաղամասերուն մէջ ապրելու միջոցով ստեղծուած սերտ կապեր»:

«Էփրը Ամերիքըն Վիլյէն» անունով համացանցի կայք մը 2001ին հրապարակեց ոչ գիտական հարցախոյզի մը արդիւնքը, որուն համաձայն, մասնակցողներուն 85 առ հարիւր թերեւ ըրէ՛նք որ մէկ է արեւելասիացիներէն տարբեր ժողովուրդները ասիացի ամերիկացի անուանելու մօտեցումին, իսկ 26 առ հարիւրը՝ դէմ:

Ի տարբերութիւն ամերիկեան պետութեան կողմէ գործածուած «սպանախօս» բացատրութեան, որ ծագումով տարբեր բազմաթիւ ժողովուրդներու տրուած ցեղային կամ ազգային բնոյթի պիտակ մը է, «ասիացի» բացատրութիւնը պաշտօնապէս ցեղային բնորոշում մըն է: Ցեղային պատկանելիութեան բաժանումները յաճախ կը պարունակեն զարտուղի եւ առեօժտուածային բնորոշումներ, սակայն բրեմն ոմանք հաւաքը են: Ականաւոր մարդաբաններու համաձայն, հարաւասիացիները ծինական, լեզուական եւ մշակութային հասարակաց աւելի շատ եզրեր ունին արեւմուտասիացիներուն հետ, քան՝ արեւելասիացիներուն:

Թէեւ ցեղային խմբաւորումներ յաճախ կը միախառնուին, սակայն այս պարագային անցումի գօտին, որ կ'երկարի Հիմալայան հզօր լեռներուն վրայով, եւ որ կողմասեան դիմագիծով հնդկները կը բաժնէ մոնկոլ դիմագիծով թիպիթցիներէն, աշխարհի ամէնէն հատու գիծն է: Պուրմայի անտառածածկ լեռները, որոնք կը տարածուին Հնդկաստանէն եւ Պանկլատէչէն դէպի արեւելք, մշակութային կապի եւ խառն ամուսնութիւններու այլ պատուար մըն են:

Մարդաբաններ երկար ժամանակ է Վեր հնդկական ենթացամաքամասին ժողովուրդները կողմասեան կը համարեն, թէ եւ տարբեր տեսակի բազմաթիւ հաւաքականութիւններ կ'ապրին անոր տարբեր շրջաններուն մէջ: 1965ին հրատարակուած իր «Տը լիվինգ ռէյ-սըզ աֆ մէն» գիրքին մէջ Քարլթըն Քուս, այդ օրերու ականաւոր մարդաբան մը, հետեւեալ ձեւով ամփոփած է գաղափարը. «Հնդկաստանը կողմասեան ցեղերու բնակավայրին ամէնէն հեռուէն արեւելեան անկիւնն է»:

Քարլթըն Քուսի գաւազը՝ Քարլ Կրտսեր, նեփալի մէջ ամերիկացի նախկին դեսպան մը,

կ'ըսէ. «Ժողովուրդը բոլորովին տարբեր ձեւերով կը հասկնայ «ասիացի» բացատրութիւնը: Ինծի համար անիկա ծագումով մոնկոլ ժողովուրդները կը բաժնէ աւելի արեւմտեան շրջաններէ ծագում առած ժողովուրդներէն, զորս կրնանք կոչել հնդկի արիացիներ, կողմասիացիներ, եւ այլն: Հետեւաբար նեփալը երկփեղկուած է: Պանկլատէչցիներն ու հնդկներուն մեծամասնութիւնը հիմնականին մէջ հնդկի արիացի են: Իսկ Պուրման կը գտնուի այս բաժանումին միւս կողմը»:

Մագումանային պատկանելիութիւններ բնորոշելու իրենց աշխատանքին մէջ մարդաբաններ նկատած են, թէ հարաւասիացիներուն ծինական ժառանգութեան պատասխանատու ըլիջները հասարակաց աւելի շատ եզրեր ունին եւրոպացիներուն հետ, քան՝ արեւելասիացիներուն: Լուրբ Բաւալլի Մֆորցա, որ Մթանֆորտի համալսարանին ժողովուրդներուն ծինարանութեան գիտութիւններու բաժանումներին պատասխանատուն է, իր «Տը Ռիսըրի Էն Ենկլաշի աֆ Ռիուճը Ենիգ» (1994) կոթողային գիրքին մէջ կը գրէ, թէ ասիացի հնդկներու եւ թայբու միջեւ «ծինական հեռուորութիւնը» 3.3 անգամ աւելի է, քան՝ հեռուորութիւնը հնդկներուն եւ իտալացիներուն միջեւ: Իրօք, հնդկները ծինարանական առումով 2.9 անգամ աւելի հեռու են հարաւային չինացիներէն, քան՝ անգլիացիներէն:

Միացեալ Նահանգներու պետութիւնը ի՞նչպէս կ'արդարացնէ «ասիացի ամերիկացի» բնորոշումը: «Մարդահամարի Գրասենեակին կողմէ օգտագործուած ցեղի գաղափարը,՝ կը բացատրէ ան,՝ բնորոշում մըն է, զոր մարդիկ իրենք կը գործածեն՝ նշելով յոյն ցեղը կամ ցեղերը, որոնք ամէնէն աւելի մօտ կը գզան: Ցեղային այս բաժանումները ընկալաբար քաղաքական կառոյցներ են եւ զանոնք պէտք է մեկնաբանել գիտական կամ մարդաբանական գիտանկիւնէն»:

Այսուհանդերձ, արդեօք հնդկները իրապէս իրենց գիրքնք իբրեւ կողմացի ծանօթացնելու փոխարէն կը ներկայացնեն իբրեւ ծայրագոյն արեւելքի: Համարիչ ապացոյցներ չկան: Պոմպէյի մէջ Պոլիվուտի ժապաւնեներու աստղերը կ'ընտրուին ամէնէն բաց գոյն

ՆՈՅՆԻՍԿ ՄԵՌԵԼՆԵՐԸ ԿԸ ԳԱՂԹԵՆ

«ՏԸ ՌԻԱԾԻԿԱԾՆ ՓՈՍԹ» ԿԸ ԳՐԷ, ԹԵ ԲԱԶՄԱԹԻ ԱՍԻԱՑԻՆԵՐ ԻՐԵՆՆ ԱՍԻԱՅԻՆԵՐՈՒՆ ԱՃԻՆՆԵՐԸ ԿԸ ՓՈԽԱՂԻՆ ԱՄԵՐԻԿԱ

Թաղումներ դասաւորող ընկերութեան մը տնօրէնը՝ Հենրի Քուսնկ 20 տարիէ ի վեր կ'օգնէ, որ չինացի ամերիկացիներ իրենց մեռելները թաղեն: Սակայն վերջերս ան սկսած է ստանալ այլ ձեւի դիմումներ:

«Ինծի կը հարցնեն, թէ կարելի՞ է իրենց ծնողներուն աճիւնները փոխադրել հոս,՝ կ'ըսէ Քուսնկը: Ասիկա սովորական դարձած է: Այն օրէն, երբ չինացի Ամերիկա գաղթած են, ուզած են իրենց նախնիները եւս փոխադրել: Հետեւաբար գերեզմաններ կը գտնենք անոնց համար»:

Եւ այսպէս, մեռելները կը գաղթեն: Ամէն տարի հարիւրաւոր մահացած չինացիներ եւ քրէացիներ կը հասնին Ամերիկայի ափերը, մասնաւորաբար՝ Լոս Անճելըսի, Պէյ Նիքայի եւ Նիւ Եորքի Քուսնկ շրջանին չինացիներով բնակուած քաղաքները, ուր ասիացի գաղթականները հետզհետէ կը բազմանան:

Չինացի գաղթականները Ամերիկան կը նկատեն ոչ միայն կարելիութիւններու երկիր մը, այլ նաեւ՝ լայնատարած դաշտերով հսկայական անդրեանակ մը. իտալ վայր մը՝ մեռելները պատուելու համար շեղ գերեզմաններուն մէջ, որոնք ձեւագծուած են ուժի ազատ հոսքի չինական փիրսոփայութեան՝ Ֆէնկ Շուի սկզբունքներով:

«Անոնք կ'ուզեն, որ ընտանիքը չբաժնուի,՝ կ'ըսէ Քուսնկը: - Կը կարծեն, թէ երբեք պիտի չկարենան վերադառնալ Չինաստան, թայբու կամ Հոնկ Բոնկ: Սակայն նաեւ կ'ուզեն իրենց զաւակներուն, թոռներուն եւ երկրորդ սերունդի ժառանգորդներուն ընձեռնել չինական աւանդութեան մը շարունակութիւնը տեսնելու առիթը»:

Սան Ֆրանսիսքոյէն անմիջապէս դուրս «Մայիքոն Լոն Մեմորիըլ Փաքը» գերեզմանատան ընտանեկան սպասարկութիւններու տնօրէնը՝ Քիլֆորտ Լի կ'ըսէ. «Կար ժամանակ, երբ մեզի թոյլ չէին տար թաղուիլ ամերիկեան գերեզմանատաներուն մէջ: Երբ արտօնութիւն տուին, մահացած երկու սերունդներու աճիւնները բերինք հոս»:

Այդ ժամանակ կարգ մը ընտանիքներ գոհ էին, որ ոսկորի քանի մը բեկոր կը բերէին: Այժմ Լի ամէն ամիս 10 դիմում կը ստանայ դիակիզուած ամբողջ մարմիններ Ամերիկա բերելու համար: «Արդեօք կարելի՞ է տարին երկու անգամ Չինաստան երթալ մեռելները յարգելու համար: Ո՛չ: Հետեւաբար կարեւոր է, որ ընտանիքը ամբողջութեամբ փոխադրուի հոս», կ'ըսէ Լի:

Ամիսը 10 դիմումը փոքր թիւ մը կրնայ

մորթով, բարձրահասակ եւ եւրոպացիի նմանող հնդկներէն: Հնդկաստանի մէջ ծանուցումներ կը շեշտեն բաց գոյն մորթն ու հասակը իբրեւ ամէնէն բաղալի յատկանիշները: Կը թուի, թէ հարաւասիացիք աւելի դիւրին կը հաղորդակցին ամերիկեան ընկերութեան հետ, գլխաւորաբար որովհետեւ կը խօսին կատարեալ անգլերէն:

Սակայն երկար ժամանակի վրայ պետութեան կողմէ սահմանուած հասկացութիւնները կրնան ի վերջոյ յաղողի՝ ստեղծելով ընկերաքաղաքական հաւաքականութիւն մը, որ պիտի բաղկանայ արեւելասիացի եւ հարաւասիացի ամերիկացիներէ: Օ. Էմ. Պէ. 1973ին հնարեց «սպանախօս» ցեղերու բնորոշումը, ինչ որ տարիներու ընթացքին մեծապէս նպաստեց հոգեբանական գետնի վրայ միացնելու նոյն հետաքրքրութիւնները ունեցող ժողովուրդներ, ինչպէս՝ արժանիքիցիներ, պոլիվիացիներ եւ տոմինիքանցիներ, որոնք ծինարանութեան առումով հասարակաց գրեթէ ոչինչ ունին»:

Այլ հարց է, թէ արդեօք դրական բան մըն է հետզհետէ աճող եւ լեզուական բարձր կարողութեամբ օժտուած հարաւասիացիները առնչել պետական հոգածութիւն վայելող փոքրամասնութեան մը հետ: Արդեօք անոնք եւս պիտի օգտուին՝ այն ծրարներէն, որոնք նպատակաւորողուած են օգնութիւն ցուցաբերելու որոշ խաւերու: Արդեօք անոնց դիմաց պատուարներ պիտի բարձրանան՝ զանոնք պետական նպաստ ստացող եւ պետութեան կախեալ հաւաքականութեան մը վերածելու համար, երբ ներկայիս անոնք ցոյց կու տան տնտեսական անկախ յաջողութիւն արձանագրելու բոլոր տուեալները:

Միացեալ Նահանգները պէտք է որոշեն, թէ արդեօք տրամադրի՞ր են քաղաքացիներ նոր գաղթականներու միաձուլումը՝ ազգային հասարակաց ինքնութիւն մը ստեղծելու համար, թէ կը նախընտան գաղթականները բնորոշել ազգային ծանօթ փոքրամասնութեան մը անունով: Այս պարագային իշխանութիւնները պէտք է մտածեն, թէ արդեօք ազգային պատկանելիութեան նման բնորոշումներ պարզապէս Միացեալ Նահանգներու պետական դիւանակալութեան չեն ծառայեր:

Թիւիլ: Սակայն Լիի գլխաւորած ընկերութիւնը միայն մէկն է թաղումներ դասաւորող այն բազմաթիւ ընկերութիւններէն, որոնք կը սպասարկեն չինացիներու, քրէացիներու եւ այլ ասիացիներու: Քալիֆորնիան ասիացի ողջ թէ մեռած գաղթականներուն նախասիրած վայրն է:

Չինական տօներու առիթով ընտանիքներու մարդը սերունդներ կ'այցելեն գերեզմանատան: Անոնք խոնկ կը վառեն, ուստիք կ'ընծայաբերեն մեռելներուն եւ կ'աղօթեն, ապա կը ճաշեն գերեզմանատան մէջ:

Ազգային մարդահամար կամ տեղեկութիւններու շտեմարան մը գոյութիւն չունի արձանագրելու համար ճամբորդող մեռելներուն հոսքը: Սակայն թաղում սպասարկութիւններ մատուցող «Ռոզ Հիլ» ընկերութեան մէկ պատասխանատուն 1991էն ի վեր արձանագրած է Լոս Անճելըսի Ութիըր արտարձանը հասնող մեռելներուն թիւը: Այդ արտաքին երկու մեռելներու աճիւնները բերուած էին ասիական երկիրներէ:

Յաջողող տարի թիւը կրկնապատկուած է: 1994ին հասած է 7ի եւ շարունակած է բարձրանալ: 1996ին արդէն 24 էր, 1998ին՝ 81 եւ 1999ին՝ 242: 2000ին եւ 2001ին ընդհանուր թիւը կը հասնէր 324ի: Այս տարի ընկերութիւնը մինչեւ Յունիս 91 նման թաղումներ դասաւորած է եւ կ'ակնկալէ, որ մինչեւ տարեվերջ անոնց թիւը բարձրանայ 200ի:

Ընկերութեան պատասխանատուին համաձայն, թիւի այս յաւելումը արդիւնք է 1997ին Հոնկ Բոնկի Չինաստան վերադարձին եւ ամերիկացի չինացիներու այն մտապիտութեան, թէ պիտի չկարենային վերադառնալ իրենց երկիրը, որովհետեւ նոր վարչակարգը պիտի չարտօնէ իրենց վերադարձը, կամ պարզապէս՝ որովհետեւ Հոնկ Բոնկը նոյնը պիտի չըլլար:

Մեռելներուն գաղթը դրական ընդունելութիւն գտած է Չինաստանի եւ Միացեալ Նահանգներու մէջ: Պէյճիկիի իշխանութիւնները մտահոգ են, որ Չինաստանի տարածքին մշակելի հողերը կը պակասին: Վերջին 20 տարիներուն անոնք քաղաքացիներուն քաղաքներ են, որ դիակիզեն իրենց մեռելները եւ հրաժար

ՆՈՅՆԻՍԿ ՄԵՌԵԼՆԵՐԸ...

Շարունակում՝ 7րդ էջէն

«Սելբրիէյըն Կարտընգ» անունով բազմազան ընկերութիւն մը, որ գերեզմաններ կը ձեւազօծ Միացեալ Նահանգներու տարածքին, կը տեղեկացնէ, թէ 4 տարի առաջ 4-5 միլիոն չինացի դիակրուած է: Ընկերութիւնը կ'ակնկալէ, որ մինչև 2010 այս թիւը մեծապէս բարձրանայ:

Այնքան ատեն որ մեռելները կը դիակրուին, Միացեալ Նահանգներ կ'արտօնեն անոնց մուտքը երկիր եւ չեն արգիլեր անոնց թաղումը: Հիւանդութիւններու դէմ պայքարի կեդրոններու մէկ պատասխանատուն կ'ըսէ, թէ մոխրացած աճիւնները հիւանդութիւններ չեն փոխանցեր: «Կենթադրեմ, որ ոսկորները մոխրացնելու չափ բարձր ջերմաստիճանը կը բնաջնջէ մարմնին մէջ բոյն դրած որեւէ ապրող բան», կ'ըսէ ան:

www.homenetmentcentral.com

«ԱԶԳԱԿ»Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՄՐՅԱՆՔ

ՎԱՐՑՈՒՄ ԹԻՒ 23

Ի՞նչ կը կոչուի ջերմանոցի կազերու արտանետումներու միջազգային համաձայնագիրը: Ե՞րբ կ'ընդունւի ԵՄ-ում:

(3 միջ)

Անուն :

Մակամուն :

Շաստ :

Հեռ. :

Ծանօթ.- Պատասխաններու կտրոսները «Ազգայն»-ի խմբագրութեան փոխանցել մրցանքի բոլոր հարցումներուն ներկայացումէն ետք:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԸԵՍԱԿ

ԳԱՍՏՈՒՐԱՆ

ՄԱՐԻ ԹԻԹԻԶԵԱՆԻ մահուան Գ. տարեկիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Երեքշաբթի, 20 Օգոստոս 2002, Գալատուրանի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՏԻՆՆԻ Կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ

ՏԻՆՆԻ (21 Մարտին 20 Ապրիլ)

Օրը յարմար է հետու տեղ մը երթալու, ինչ որ ուրախ պահեր պիտի ստեղծէ: Այսպիսի ճամբորդութիւններ յիշատակելի կը մնան կեանքի մէջ: Օգտուեցէք ստեղծուած ազուր առիթներէն:

ՏԻՆՆԻ (21 Ապրիլէն 21 Մայիս)

Անակնկալ եկամուտ մը պիտի ուրախացնէ ձեզ: Ձանցեք այս գումարը պահել, շուտով չծախսել: Խնայողութիւնը շահ է:

ՏԵՐԿՈՒՆԻՆԻ (22 Մայիսէն 21 Յունիս)

Ձեր որոշումները գործի վերածեցէք: Մի՛ երկմըտիք, ոչ ալ մանր - մուր, անընթաց անհաւատարմութիւններու մասին մտածեցէք: Եղէք հաստատամիտ:

ՏԵՐԿՈՒՆԻՆԻ (22 Յունիսէն 23 Յունիս)

Գործ փնտռելէ յուսահատուած կը թուիք: Այսուհանդերձ այսօր պիտի ստանաք նոր առաջարկ մը, որ պիտի զարմացնէ ձեզ: Անպարտեցէք ընդունելու այս հրաւերը:

ՏԵՐԿՈՒՆԻՆԻ (24 Յունիսէն 23 Օգոստոս)

Այսօր կանուխ պիտի արթննաք եւ պիտի դիմագրուէք կարգ մը հետաքրքրական հարցեր: Պատրաստ եղէք դիմաւորելու նաեւ կարգ մը բարեկամներ, որոնք եկած են արտասահմանէն: Օրը ձեզ պիտի մղէ աշխատելու:

ՏԵՐԿՈՒՆԻՆԻ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)

Յարկաբաժին մը կամ որեւէ տեսակի բնակարան մը գնելու ձեռք բերաք թիչ մը պիտի ուշանայ, որովհետեւ այս տունը տակաւին պատրաստ վիճակի մէջ է: Մի՛ սրտնեղիք, այլ՝ համբերեցէք:

ՏԵՐԿՈՒՆԻՆԻ (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)

Օրը սքանչելի է կարճ ճամբորդութիւնը մը կատարելու համար: Եթէ ունիք կարելիութիւնը, ձեզի թող ընկերակց մը սիրած անձը: Շատ ներգաշնակ օր մը պիտի ունենաք:

ՏԵՐԿՈՒՆԻՆԻ (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)

Տնտեսական մարզի մէջ պիտի կարենաք ձեզ ձգել հաւասարակշռութիւն մը: Բայց խեղճութիւն մը պիտի կատարէք ու պիտի մխիթարէք ձեր գումար մը:

ՏԵՐԿՈՒՆԻՆԻ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)

Ձեր տրամադրութիւնը շատ փայլուն է այսօր, պիտի շրջապատուիք բարեկամներով: Տօնակն ցնծութեան մէջ պիտի ցնծուիք այս իրիկուն:

ՏԵՐԿՈՒՆԻՆԻ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)

Ձեր տրամադրութիւնը բարձր կետի վրայ է այսօր: Ձեր շուրջը պիտի տարածք ձեր ուրախութիւնը: Միշտ նոյն տրամադրութիւնը ունեցէք:

ՏԵՐԿՈՒՆԻՆԻ (21 Յունուարէն 19 Փետրուար)

Բարեկամներով շատ ազուր երեկոյք մը պիտի ունենաք: Անծանօթ անձերու հետ նոր բարեկամութիւններ պիտի հաստատէք: Օրը նպաստաւոր է նաեւ նիւթապէս:

ՏԵՐԿՈՒՆԻՆԻ (20 Փետրուարէն 20 Մարտ)

Աշխատանքի մէջ կ'ակնկալէիք պաշտօնի բարձրացում մը, որուն արժանի էք. սակայն այսօր այս հարցը պիտի չիրակեցանայ, որովհետեւ անծանօթ պատճառներ արգելք պիտի ըլլան: Համբերեցէք:

ՕՐԱՏԵՏՐ

ՓՈԱՍՏՈՐ / ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ / ԶԲՕՍԱԵՐՉՈՒԹԻՒՆ

ՖԱՔՐԱ ԱԿՈՒՄԲԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍԸ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՅՆԷ ԼԻՔԱՆԱՆԵԱՆ ԶԵՌԱՐՈՒԵՍԻ ԳՈՐԾԵՐ



Յուցահանդէսէն անկիւն մը

Վեց տարիէ ի վեր ամէն ամառ կը կազմակերպուի «Փլէն ար տը Ֆաքրա Քլայա» չորսօրեակը, որուն ընթացքին տօնախմբութեան մթնոլորտի մէջ կը ցուցադրուին ձեռարուեստի եւ ձեռարուեստ արուեստի լիբանանեան վերջին նորութիւնները: Այս ցուցահանդէսը տարուէ տարի տեղ կու տայ նոր եւ իրաւաստուկ աշխատանքներու, ինչպէս նաեւ կը քաջալերէ երիտասարդ արուեստագէտները:

Ակումբին սրահներէն դուրս յորդող եւ անոք պարտէկներուն մէջ տարածուած ցուցահանդէսը իր տաղանթներուն եւ կրկաններուն մէջ կը ցուցադրէ «արդիականացած» լիբանանեան արուեստի (արթիկան) օրինակներ, Ամշիթ գիւղի անանաւաշատուկ կահարարները եւ ապակեղէնները: Աւանդական ձեռագործներու հազուատներուն կողքին կահարարներու շարքին են գունապարզութեամբ ձեւաւորուած յարմարեցումները:

Ինչ կը վերաբերի տնային յարմարանքներու լիբանանցի արուեստագէտներու աշխատանքները ճոխ կը ցուցադրէ «արդիականացած» լիբանանեան արուեստի (արթիկան) օրինակներ, Ամշիթ գիւղի անանաւաշատուկ կահարարները եւ ապակեղէնները: Աւանդական ձեռագործներու հազուատներուն կողքին կահարարներու շարքին են գունապարզութեամբ ձեւաւորուած յարմարեցումները:

Գարտէպներուն մէջ ցուցադրուած իրերուն շարքին են գունապարզութեամբ ձեւաւորուած յարմարեցումները: Այս ցուցահանդէսը տարուէ տարի տեղ կու տայ նոր եւ իրաւաստուկ աշխատանքներու, ինչպէս նաեւ կը քաջալերէ երիտասարդ արուեստագէտները: Ակումբին սրահներէն դուրս յորդող եւ անոք պարտէկներուն մէջ տարածուած ցուցահանդէսը իր տաղանթներուն եւ կրկաններուն մէջ կը ցուցադրէ «արդիականացած» լիբանանեան արուեստի (արթիկան) օրինակներ, Ամշիթ գիւղի անանաւաշատուկ կահարարները եւ ապակեղէնները: Աւանդական ձեռագործներու հազուատներուն կողքին կահարարներու շարքին են գունապարզութեամբ ձեւաւորուած յարմարեցումները:

ՏՈՒՆ ԿԵՐԱՓՈՒՄԱՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ԵՒ «ՈՒՆՏԻ ՕՐ» ՊԻՔՖԱՅԱՅԻ
Ի գիտութիւն մեր սիրելի հաւատացեալ ժողովուրդին կը յայտնենք, թէ Ս. Աստուածածին Կերափոխման տօնին առիթով, Պիքֆայայի Ուխտի Օրը պիտի կատարուի Շաբաթ, 17 Օգոստոս 2002: Այս առիթով, պիտի կատարուի հանդիսաւոր Սուրբ պատարագ Ս. Աստուածածին մատրան շրջափակին մէջ: Արարողութեան պիտի նախագահէ եւ ժողովուրդին իր պատգամը պիտի փոխանցէ՝

Ն. Ս. Օ. Տ. Ս. ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
Պիտի պատարագ եւ քարոզէ՝
ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ
ԱՌԱՋՆՈՐԴ ԼԻՔԱՆԱՆԻ ԸՆՅՈՑ

Ժամերգութիւն կ'սկսուի երեք ժամը 6:00ին Ս. պատարագ կ'սկսուի երեք ժամը 7:30ին Յաւարտ Սուրբ եւ անմահ պատարագի, պիտի կատարուի խաղողի եւ մատաղի օրհնութիւն, հանդիսապետութեամբ վեհափառ հայրապետին: Պատարագի երգեցողութիւնը պիտի կատարէ՝ «ՇՆՈՐՇԱԼԻ» երգչախումբը, ղեկավարութեամբ՝

ՇՆՈՐՇԱԼԻ. Ս. ՄԵՂԻԿ ԿՐԴ. ԲԱՐԻԶԵԱՆԻ

Այս հոգեպարար առիթով, մեր հաւատացեալ ժողովուրդին Պիքֆայա երթելի դիրքութիւն ընծախելու համար յատուկ պատարագ պիտի տրամադրուի հետեւեալ վայրերուն մէջ
- Ս. Կարդանանց եկեղեցւոյ դիմաց
- Ս. Աստուածածին եկեղեցւոյ դիմաց
- Ս. Յովհաննու Կարապետ եկեղեցի
- Ս. Յակոբ եկեղեցւոյ դիմաց
- Ֆանար՝ ակումբին առջեւ եւ Ռաուտա
- Ս. Սարգիս եկեղեցւոյ կից
- Աթրիխա՝ Սիմոնեան շէնքեր
- Ս. Զառասնից Մանկանց եկեղեցի
Պատերը պիտի մեկնին երեկոյեան ժամը 5:00ին եւ պատրաստ պիտի ըլլան ժամը 11:00ին, մեր ժողովուրդը վերադարձնելու Պէյրութ:
Կոչ կ'ուղղենք հաւատացեալ մեր ժողովուրդին, որ օրուան խորհուրդով ու պատգամով զօրացած ուխտի գայ Պիքֆայայի Ս. Աստուածածին մատրան վերամտրուելու դարեր առաջ Աստուծոյ հետ կ'ընեն իր ուխտը:

ԿՐՈՍԱԿԱՆ ԺՈՂՈՎ

ԽԱՉՔԱՌԻ ԹԻՒ 5223 Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՐԱՋԱՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										
11										

ԸՈՐԻՋՈՆԱԿԱՆ	ՈՒՂՈՎԱԿԱՆՅԵՍ
1. Բարակ ու փայլուն նուրբ թել - Համաստեղութիւն մը:	1. Կախանցու - Այբուրեանէն:
2. Ճարակատեղի:	2. Սանձի փոկ - Անգոր:
3. Սովորական կամ ստորին - Հանդէս:	3. Կարծր փայտով մշտադալար թուփ - Շին Զէյնի զինուորական թել:
4. Հայկական ամիսներու ժէ. օրը - Հարսին մայրը՝ փեսային նկատմամբ:	4. Կարող - Ստացական դերանուն - Ինք:
5. Խաշոյ - Սլաւ ժողովուրդ մը:	5. Կարծր շինանիւթ - Անմեղ:
6. Անձնական դերանուն - Կանտի գերդաստանէն վարչապետ մը:	6. Սերաստիոյ տարրեր անուանումը - Ձայներանիշ - Հոլովակերտ մասնիկ:
7. Անմիտ - Ողջակէզ:	7. Անաստաս Ա. կաթիլի զինուորական թել:
8. Կրկնուած տառեր - Յուզական անձան - Արձան:	8. Ձայնակից գիրեր - Եւր - Ալ:
9. Արական օտար անուն - Յովհաննայի Հայրը:	9. Արտաշէս Ա. ի որդիներէն - Ձայնանիշ:
10. Սուրբոյ գետերէն - Պողոստեսակ:	10. Մանրութեան միակոր - Հոսիլի:
11. Մեղմ հով - Մակոյկ:	11. Հրակէր - Իգական անուն:

ԹԻՒ 5222
ԽԱՉՔԱՌԻՆ
ԼՈՒԾՈՒՄԸ

ՀԵՌԱՏԵՍԻԼ

ԹԵ. ԷԼ.	ՄՈՒՍԹԱՔՊԱԼ	10:40.- Բարի ախորժակ
9:30.- Մոնտիալի մրցումներ	7:00.- Լուրեր	11:00.- Հայրեր
13:00.- Մաքու հանա	8:30.- Սլաւ	11:20.- Բուրիկոն +
14:00.- Եւրոպայի	ալ սապահ	12:00.- Լուր
14:30.- Լուրեր	13:00.- Ֆիշ Ինֆօ	12:05.- Top 10
15:00.- Մըշուար	13:05.- Նորս լինտիկ	13:00.- Լուր
17:00.- Պէս սելըր	14:00.- Անգլերէնով լուրեր	13:05.- Top 10
18:00.- Շրլի Հոյմ	14:20.- Ֆրանսերէնով լուրեր	13:55.- Նոթատետր
18:30.- Արաքական ֆիլմաշար	14:40.- Հայերէնով լուրեր	14:00.- Լուր
19:30.- Արաք. լուրեր	15:30.- Ա. Թէ. Մէ. Ալ.	14:05.- Top 10
20:00.- Տեղական ֆիլմաշար	Թինիսի մրցաշարք	15:00.- Հայրեր
22:00.- Տեղական ֆիլմաշար	16:30.- Թելեթապիկ	15:20.- Մուլտֆիլմեր
23:00.- Ամերիկեան ֆիլմաշար	17:00.- Ըզդար ըրպար	«Քաղաքի մուկը եւ դաշտային մուկը»
	17:30.- Արաքական ֆիլմաշար	«Զգուշացէք, կապիկներ են»
	18:30.- Միլիթրանա	16:00.- Հեռուստատեսիալ «Միտի կախարարներ»
	19:30.- Մոնտիալի յատուկ յայտագիր	17:00.- Երեկոյեան Երեւան
	20:00.- Արաքերէն լուրեր	17:20.- Միտի տուն
	20:30.- Բուսում	18:10.- Այլուր
	Մուրախարիտ	18:20.- Եկեղեցական կեանք
	20:32.- Ման սանարպահ մէլիոն	18:35.- Տուն-տունիկ
	21:30.- Ամերիկեան ժապաւէն	19:00.- Հայրեր
		19:50.- Արական նշան
		20:00.- Երկար ժապաւէն՝ «Անիծումները»
		20:25.- «Ում է ժպտում կանգը»
		21:40.- Պոէզիայի ակնարարներ
		22:00.- Հայրեր
		22:20.- Կէս գիշերային ձայնարան
		23:20.- Հայրեր (ուսերէն)
		23:25.- Հայրեր (անգլերէն)
		23:30.- Երեկոյեան Երեւան
		23:45.- Այլուր
		00:00.- Լուր
		00:05.- Top 10
		01:00.- Լուր
		01:05.- Top 10
		01:55.- Նոթատետր
		02:00.- Լուր
		02:05.- Top 10
		03:00.- Հայրեր
		04:00.- Հեռուստատեսիալ «Էնդիտի անեղծութիւն»
		04:25.- Եւրոպայի եւ 04:45.- Երեկոյեան Երեւան
		05:00.- Երկար ժապաւէն՝ «Անիծումները»
		06:30.- Մուլտֆիլմ՝ «Զգուշացէք, կապիկներ են»
		06:40.- Պոէզիայի ակնարարներ
		06:50.- Այլուր
		(*) Վերոյիշեալ յայտագիրները ենթակալ կրնան ըլլալ որոշ փոփոխութիւններու:

Մ Ա Ր Ջ Ա Կ Ա Ն

ԱՇԽԱՐՀ



ՓԻՆԿ ՓՈՆԿ. ԱՐԱՐԱԿԱՆ ԱՌՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԱՅԻ ՖՈՒԹԳՈՂԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՃԱՏՐԱԿ. ԼԻԲԱՆԱՆԻ ՏՂՈՅ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ԼԻԲԱՆԱՆԻ ՉՈՅՔ ԿԱԶՄԵՐԸ Կ'ԱՐՉԱՆԱԳՐԵՆ ՀԱԲԱՍԱՐԱՊԵՍ ՊԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐ

Ամմանի մէջ (Յորդանան) տեղի ունեցող փինկ փունկի արաբական ազգային խումբերու 18րդ ախոյեանութեան մրցաշարքին, երէկ տեղի ունեցան երկրորդ օրուան մրցումները: Մրցաշարքին իր մասնակցութիւնը կը բերէ նաեւ Լիբանան, տղոց եւ աղջկանց խումբերով:

Երէկուան մրցումներուն, Լիբանանի աղջիկները առաջինին 3-0 արդիւնքով պարտութեան մատնեցին Քուէյթը, իսկ երկրորդին՝ 3-0 արդիւնքով պարտութեան: Առաջին օրուան մրցումներուն, անոնք 3-0 արդիւնքով պարտութեան մատնած էին Պաղեստինը, ապա նոյն արդիւնքով պարտութեան՝ մրցաշարքը հիւրընկալ Յորդանանէն:

Լիբանանի տղաքը երէկուան իրենց կատարած առաջին մրցումին թէւ 3-1 արդիւնքով պարտութեան Քարաքէն, սակայն երկրորդին յաջողեցան 3-2 արդիւնքով պարտութեան մատնել Ալճերիան: Առաջին օրուան մրցումներուն, անոնք 3-0 արդիւնքով պարտութեան մատնած էին Սուրիան, իսկ երկրորդին նոյն արդիւնքով պարտութեան՝ Քուէյթէն:

ՍՈՒՐԻՈՅ ՄԷՉ

ԱՐԵՒՍՏԵԱՆ ԱՍԻՈՅ ԶՏՈՒՍԻ ՄՐՅՈՒՄՆԵՐԸ՝ 30 ՕԳՈՍՏՈՍԷՆ 7 ՍԵՊՏԵՄԵՐ

30 Օգոստոսէն 7 Սեպտեմբեր, Սուրիա կը հիւրընկալէ Արեւմտեան Ասիոյ ֆուտբոլի պտուձի մրցումները, որոնց իրենց մասնակցութիւնը կը բերեն վեց երկիրներ՝ Իրան, Յորդանան, Պաղեստին, Իրաք, Լիբանան եւ հիւրընկալ Սուրիա:

Վիճակագրութեան համաձայն՝ Լիբանան, Իրան եւ Յորդանան մաս կազմեցին Ա. խմբակին, իսկ Պաղեստին, Իրաք եւ Սուրիա՝ Բ. խմբակին:

Բացման մրցումը տեղի պիտի ունենայ Իրանի եւ Յորդանանի միջեւ, որուն պիտի յաջորդէ Սուրիա - Պաղեստին մրցումը (նոյն օրը):

Իւրաքանչիւր խմբակի առաջին երկու դիրքերը գրաւող խումբերը կ'անցնին կիսաաւարտական հանգրուան: Ապա մրցումները կը կատարուին նաք - առիթի դրութեամբ:

ԱԻՍՏՐԻԱ - ՎԻԵՆՆԱ Կ'ՈՒՉԷ ԶԵՌՔ ԶԳԵԼ ԷՖԵՆՊԵՐԿԸ

Աւստրիոյ ֆուտբոլի Ա. դասակարգի ախոյեանութեան 2րդ դիրքը գրաւող Ալբա-տրիա - Վիեննա մօտէն հետաքրքրուած է գերմանացի նախկին միջազգային փլէյմէյթըր Շթեֆան Էֆենպէրկով, յայտնեց խումբին պատասխանատուներէն՝ Փիթըր Սվեթիթը:

Սվեթիթը աւստրիական «Էյ. Փի. Էյ.» լրատու գործակալութեան յայտնեց, թէ պիտի մեկնի Միւնխի տեսակցելու համար 34 տարեկան Էֆենպէրկի հետ, որ անցեալ շաբաթ յայտարարած էր, թէ կը մտադրէ լքել ֆուտբոլը, եթէ որեւէ խումբ տաքարկ մը չստանայ, մանաւանդ նկատի ունենալով, որ Պալէրն Միւնխի հետ անոր պայմանագրութիւնը աւարտած էր:

Սվեթիթը ըստ. «Միւնխի պիտի երթամ իմանալու համար Էֆենպէրկի կարծիքը: Ան շատ լաւ ֆուտբոլիստ մըն է եւ շատ ուրախ պիտի ըլլանք եթէ ան փափաքի միանալ մեր կազմին: Բայց եւ այնպէս տակաւին յստակ բան չկայ եւ նախընտրելի է այս միտքին մասին շատ չխօսիլ Էֆենպէրկի կարծիքը չառած»:

ԵՆՏ. Է. ԷՖ. Ա. Ի ԶՏՈՒՍԻ ՄՐՅԱՇԱՐՔ

ՍՊԱՐՏԱԿ ԵՐԵՒԱՆ ՊԱՐՏՈՒԹԻՒՆ ԻՐ ՀԻՒՐԸՆ՝ 2-0

ԵՆՏ. Է. ԷՖ. Ա. Ի ԿՈՒՄԻ Ա. ԿԱՆՔՐՈՒԱՆԻ ԵՐՔԻ մրցումներուն, երէկ Երեւանի մէջ կայացած Սպարտակ Երեւան - Սերվէթ մրցումը վերջ գտաւ չորսերկուսական կազմին յաղթանակով. 2500 համակիրներու ներկայութեան արդիւնքը եղաւ 2-0: Հիր կազմին երկու անպատասխան կոլերը նշանակեց Ապտիլ Բատեր (73րդ եւ 85րդ):

ԱՅՍՕՐ՝ ՍԱՐՍԷՅ - ԼԻՈՆ ՏԱՔ ՃԱԿԱՏՈՒՄ

Ֆրանսայի ֆուտբոլի ախոյեանութեան 3րդ հանգրուանի բացման մրցումին, այսօր Մարսէյ 2002-2003 եղանակի իր առաջին մրցումը պիտի կատարէ իր դաշտին՝ «Վելոտրոն»-ի մէջ, երբ հիւրընկալէ Լիոնը: Մրցումը տեղի պիտի ունենայ ժամը 21:45ին, Պէյրութի ժամով:

Սկզբունքով, անիկա առաջին հանգրուանի մրցումը պիտի կատարէր իր դաշտին վրայ, սակայն Ֆրանսայի ֆուտբոլի ֆետերասիոնին կողմէ մէկ մրցումով կախակայած ըլլալով, նանթի դէմ մրցումը կատարեց Լիոնի դաշտին վրայ, ուր 2-0 արդիւնքով պարտութեան:

Անցեալ շաբաթավերջին Մոնսպոն 1-0 արդիւնքով պարտութեան մատնած Մարսէյ, այսօր ինքնավրատակ է, որ յաղթանակ մը պիտի արձանագրէ կազմի մը դէմ, որ

ցարդ նշանակած է ամէնէն շատ կոլերը (9):

Վերջին երեք եղանակներուն, միշտ այ վտանգաւոր դիրքի վրայ գտնուած Մարսէյ այս եղանակին ճիգ չ'ուզեր խնայել յառաջիկայ տարուան համար «Չէմփիրնսկ Լիկ»ի տոմս մը ապահովելու:

Այսօրուան մրցումը յիշատակելի պիտի ըլլայ Լիոնի խմբապետ Սոնի Անտերսոնի հա-

մար, նկատի ունենալով որ «Վելոտրոն» անոր վերադարձը պիտի արթնցնէ անցեալի յուշերը: Ան Նոյեմբեր 1993ին էր, որ այդ դաշտին վրայ Մարսէյի հետ կատարած էր իր առաջին մրցումը՝ Ֆրանսայի ֆուտբոլի ախոյեանութեան մրցումներուն: Ան այսօր պիտի կատարէ իր 200րդ մրցումը՝ Ֆրանսայի ֆուտբոլի ախոյեանութեան ծիրէն ներս:

Ստորեւ՝ 3րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը.

● ԱՅՍՕՐ Մարսէյ - Լիոն ժամը 21:45ին

● ՎԱԳՐ Մոնփելիէ - Պորտո ժամը 18:15ին
Պասթիա - Մոնաքո ժամը 21:00ին
Կէնկան - Ռէնն ժամը 21:00ին
Լիլ - Նիս ժամը 21:00ին
Փարիզ Ս. ժ. - Ամաքսիո ժամը 21:00ին
Սըտան - Լանս ժամը 21:00ին
Սոչո - Նանթ ժամը 21:00ին
Սթրասպուրկ - Լը Հաւր ժամը 21:00ին
Թրուա - Օքսէր ժամը 21:00ին

«ՉԵՍՓԻՆԸ ԼԻԿ». ԶՏՈՒՍԻ ՄՐՅԱՇԱՐՔ

ՄԱՆՉԵՍԹԵՐԸ ԵՈՒՆԱՅԹԸՑ ԱՆԱԿՆԿԱԼ ՊԱՐՏՈՒԹԻՒՆ ՄԸ ԿՐԵՑ ՀՈՒՆԳԱՐԻՈՅ ՄԷՉ

«Չէմփիրնսկ Լիկ»ի գտումի Գ. հանգրուանի երթի մրցումներուն, մեծագոյն անակնկալը արձանագրուեցաւ Պոտսֆելչթի մէջ (Հոնգարիա), ուր տեղւոյն անձանօթ կազմերէն՝ Ջալոսկեթս-զէրկ 1-0 արդիւնքով պարտութեան մատնեց Մանչեսթըր Եունայթըտը, 28 հազար համակիրներու ներկայութեան:

Հոնգարիոյ ախոյեանը իր յաղթանակը արձանագրեց մրցումին կորսուած վայրկեաններուն. Բ. կիսախաղին դաշտ ներկայացած Պելա Բոփլարովիթս նշանակեց սուղ կոլը:

Հակառակ իր այս կրած պարտութեան, անգլիական կազմը տիրապետեց իր մրցակիցին վրայ, մէկ անգամ հարւածելով անոր բերդին սիւնին (Օլէ Կիւնար



Ֆիլիփո Ինցակի, որ կը սոցէ իր նշանակած կոլը

համակիրները մրցումէն ետք կը գտնուէին սո-նախմբութեան միջնորդի մէջ, մանաւանդ որ իրենց խումբը առաջին անգամ ըլլալով էր, որ եւրոպական մրցաշարքի մը

մակիրներու ներկայութեան, Ֆրանք Տը Պէօր (8րդ), իսկ Լան Ռոման Ռիբլեյմէ (80րդ) եւ Ֆիլիփ Բոքի (90րդ) նշանակեցին Պոտսֆի կոլերը: «Սան Սիթո»ի մէջ, Ա. Սէ. Միլան 1-0 արդիւնքով պարտութեան մատնեց Սլովան Լիպեչէքը (Չեխիա), շնորհիւ Ֆիլիփո Ինցակիի նշանակած կոլին (68րդ):

Ստորեւ մնացեալ մրցումներուն արդիւնքները.

Շախթար Տոնէքք (Ուքրաինա) - Ֆ. Բ. Պրիւթ (Պոլսիա) 1-1
Լեւսթր Սոֆիա (Պուլկարիա) - Տիւրքիա 0-1
Չէմպեքիթար Սարաեւո (Պոսնիա) - Նիւք-սըլ (Ալբանիա) 0-1
Սելթիք (Սկոտլանդ) - Պասըլ (Չեխիա) 3-1
Սփորթինկ Լիպսոն (Փորթուգալ) - Ինթեր Միլան (Իտալիա) 0-0
Մարպի Հայֆա (Իսրայէլ) - Շրոմմ Կրաք (Աւստրիա) 2-0

Ա. Փոնէլ. Նիկոսիա (Կիպրոս) - Ա. Բ. Արէնք (Յունաստան) 2-3
Կէնք (Պոլսիա) - Սփարթա Փրակա (Չեխիա) 2-0
Պուլիսթա (Փորթուգալ) - Օքսէր (Ֆրանսա) 0-1
Ֆէյենուրտ Ռոթտամ (Հոլանտա) - Ֆեներպահչէ (Թուրքիա) 1-0



Ալեքս Ֆերկլըն տխուր իր կազմին կրած պարտութեամբ

Սոլսթիա), իսկ մէկ անգամ ալ անոր նշանակած կոլը չեղեալ համարուեցաւ օֆսայտի պատճառաբանութեամբ:

Մրցումէն ետք, Մանչեսթըրի մարզիչ Ալեքս Ֆերկլըն ըստ, թէ իր կազմին կրած պարտութիւնը դաշտին վատ վիճակին պատճառով էր: Ան արձագանք տուաւ, թէ անակնկալի եկած է, երբ մրցակից կազմը միայն մէկ յարձակում կատարելով՝ յաջողեցաւ նշանակել կոլ մը:

Դարձի մրցումը տեղի պիտի ունենայ Օգոստոս 21ին, «Օլոն Թրեֆորտ»ի մէջ: Հոնգարական կազմին

կը մասնակցէր: Ա. Սէ. Միլան եւ Պարսելուա իրենց դաշտներուն վրայ յաղթանակներ արձանագրեցին, մինչ Պայէրն Միւնխի իր յաղթանակը արձանագրեց եւրոպայէտի մէջ, 3-0 արդիւնքով պարտութեան մատնելով Փարթիզան Պելլրատը, շնորհիւ Միքայէլ Թառնաթի (21րդ), Ենս Ժերմիսի (71րդ) եւ Բլաուտիո Փիզարոյի (78րդ) նշանակած կոլերուն:

«Նու Բամփ»ի մէջ Պարսելուա 3-0 արդիւնքով պարտութեան մատնեց Լեկիա Վարշաւան (Լեհաստան), 50 հազար հա-

ՔՆԱՐԻԿ ՍՈՒՐԱՏԵԱՆ ԴԱՐՉԵԱԼ ՅԱՂԹԵՑ

Լիբանանի տղոց ճատրակի ախոյեանութեան երկրորդ հանգրուանի մրցումներուն, Հ. Մ. Ը. Մ. Անթիլիասի 3 վարպետները յաջող ելոյթներ ունեցան: Քնարիկ Սուրատեան պարտութեան մատնելով Իսմ Արաժին՝ շարունակեց մնալ պարագլուխի դիրքին վրայ: Նշենք, որ մրցաշարքի 41 մասնակիցներէն միայն 4 վարպետներ, որոնց կարգին՝ Հ. Մ. Ը. Մ. սկան քոլըր, ցարդ ապահոված են առաւելագոյն 2 կէտերը:

Սերժ Յովանեան յաջողաբար 2րդ անգամ ըլլալով արձանագրեց հաւասարութիւն մը: Անոր մրցակիցն էր միջազգային վարպետ Ռաֆիք Պարաքաթը:

Տոքթ. Գէորգ Թերպեան, իր կարգին, արձանագրեց յաղթանակ մը:

ԼՈՂԱՐՇԱՒ

ՆԱԹԱԼԻ ՔՈՒԿԼԻՆ ԱՐՉԱՆԱԳՐԵՑ ԱՇԽԱՐՀԻ ՆՈՐ ՄՐՅԱՆԻՇ



Նաթալի Զուկլին

Ֆորիտայի մէջ տեղի ունեցող Միացեալ Նահանգներու լողարշաւի ախոյեանութեան մրցումներուն, 19 տարեկան ամերիկացի Նաթալի Զուկլին աղջկանց 100 մէթր կուրծքի լողի աշխարհի նոր մրցանիշ մը հաստատեց, արձանագրելով 59" 58 արդիւնք մը:

Նախկին մրցանիշը կը պատկանէր չին Հէ Սիհոնկի, որ հաստատուած էր 1994ին, երբ ան արձանագրած էր 1' 00" 16 արդիւնք մը:

Իր կատարած այս իրագործումէն ետք, Նաթալի դարձաւ առաջին ամերիկացին՝ Քեթրին Ֆերկլաչէն ետք, որ կը հաստատէ աշխարհի նոր մրցանիշ մը (1966ին):

ՊՈՒՆՏԵՍԼԻԿԱԼ

1860 ՄԻՆԻԽ ՏԵՂԻ ՏՈՒՄ ԶԱՆՉԱ ՌՈՍԹՈՔԻ ԱՌՉԵՒ՝ 2-0

Գերմանիոյ ֆուտբոլի ախոյեանութեան (Պունտսլիկա) Ա. հանգրուանէն լետագուած մրցումը մը, 1860 Մինիխ իր դաշտին վրայ 2-0 արդիւնքով պարտութիւն մը կրեց իր հիւրէն՝ Հանչա Ռոսթոքէն, քսան հազար համակիրներու ներկայութեան: Մարքո Վորպէք (44րդ) եւ Մարքուս Լանթը (54րդ) նշանակեցին Ռոսթոքի երկու կոլերը:

Մինիխի կազմը մրցումը աւարտեց տասը մարպիկով, երբ 85րդ վայրկեանին Մարքո Քուրց կարմիր քարտ ստացաւ:

RENT A BIKE GEMAYZER

CYCLSPORT since 1932

1 THE BICYCLE SHOP
2 RENT A BIKE
3 CREDIT FACILITIES
4 SERVICE
5 NEW BIKES

FAST DELIVERY TO ANY DESTINATION

Sources: Korf Klein & Sons Est. - GEMAYZER, main road, Tadzong Payer, Tel.: 01-846792
Nahr Beirut 01-581797 - Jol of Doha Highway 04713344 - E-mail: CYCLSPORT@CYBERIA.NET.LB

ՓՈՒԹԻՆ ԶՕՐԱՎԻԳ՝ ՌՈՒՍԻԱ - ՊԻԵԼՈՌՈՒՍԻԱ ՄԻԱԶՈՒԼՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԻՆ



Լուրջաչենցո եւ Փուրթին

Ռուսիոյ նախագահ Վլադիմիր Փուրթին անսպասելիորէն շեշտը դրած է Պիելոուսիոյ հետ միութեան մասին, յայտնելով, որ պատրաստ է հանրաքուէ մը կայացնելու՝ մէկ պետութեան կազմելու գծով, ապա մէկ նախագահի մը համար ընտրութիւններ կատարելու:

Մոսկուայի մէջ, Պիելոուսիոյ նախագահ Ալեքսանտր Լուրջաչենցոյի հետ վեհաժողովէ մը ետք, Փուրթին, որ 2 ամիս առաջ կը թուէր սառն մօտեցում ցուցաբերել երկու երկիրներուն միացման գաղափարին հանդէպ, յայտնած է, որ եթէ Ռուսիոյ եւ Պիելոուսիոյ ժողովուրդներուն կողմէ զօրակցութիւն արտայայտուի, Մարտ 2004ին ընտրութիւններ կրնան կայացուիլ մէկ նախագահի մը համար:

Լուրջաչենցո 1996ին համաձայնութիւն գոյացուցած էր այս գծով՝ Փուրթինի նախորդին՝ Պորիս Ելցինի հետ:

Սակայն, պիելոուսի ղեկավարը ցարդ մէկ պետութեան մասին չէ խօսած, այլ՝ ակնարկած է դրութիւններու եւ տնտեսութեան միաձուլման, որ երկու երկիրներուն գերիշխանութիւնը պիտի պահպանէ: Ան շեշտած է, որ Պիելոուսիա Ռուսիոյ շրջաններէն մէկը պիտի չդառնայ:

Մինչ փերագառնալէն ետք, ան մեծ խանդավառութեամբ չէ արտայայտուած Փուրթինի առաջարկին մասին, յայտնելով, որ Ելցինի հետ համաձայնութիւնը պիտի շարունակէ հիմ ծառայել յառաջիկայ քանի մը տարուան յարաբերութեանց:

Լուրջաչենցո Մ. Նահանգներու կողմէ Եւրոպայի վերջին բռնատէրը կը նկատուի, որովհետեւ երկրին մէջ ընդդիմադրութիւնը եւ ազատ մամուլը կը ճգմէ:

Փուրթին լիբրալ միութեան մը մասին խօսելով, կը թուի թափ տուած ըլլալ Լուրջաչենցոյի վրայ ճնշումներուն, որպէսզի ան որոշէ, թէ ճիշդ ի՞նչ համեմատութեամբ պիտի հետապնդէ «միութեան» ծրագիրը:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՌՈՒՍԻԱ ՔԱՐԻՒՂԻ ԵՐԿՈՒ ՀՍԿԱՆԵՐԸ ԿՐՆԱՆ ՄԻԱՆԱԼ ԿԱՐԵՒՈՐ ԾՐԱԳԻՐԻ ՄԸ ՀԱՄԱՐ

Ռուսիոյ քարիւղի երկրորդ մեծագոյն ընկերութիւնը՝ «ԵՆՏ-ՔՈՍ», յայտնած է, թէ կրնայ միանալ «ԼՈՒՔՕՅԼ» ընկերութեան՝ Պարիսի Ծովու Մուրմանսկ նահանգի ստանի մէջ արտադրութիւն կեդրոն մը կառուցելու համար, Մ. Նահանգներէն առաքուած քարիւղը աւելցնելու նպատակով:

«ԵՆՏ-ՔՈՍ» Յունիսի Ռուսիոյ կողմէ Մ. Նահանգներու քարիւղի ուղղակի արտադրութիւն ձեռնարկած է: Անոր տնօրէնը յայտնած է, որ «ԼՈՒՔՕՅԼ»-ի ծրագիրը Ատլանտեանի ձայնով հայթայթումներուն քափ կրնայ տալ եւ Վոսիտի ներդրումը խնայողութեանը կրնայ ներկայիս ռուսական քարիւղի արտադրութիւն մեծ համեմատութիւնը այդ ներդրումը տեղի կ'ունենայ:

Ռուսիա ներկայիս աշխարհի շուկաներուն օրական 3 միլիոն տակառ քարիւղ կ'արտադրէ: Անոր քարիւղի արտադրութիւնը յարաբար չորրորդ տարին ըլլալով բարելաւում կ'արձանագրէ: Մոսկուա կարիքը ունի արտադրութիւնի նոր ձայններ կառուցելու, նկատի ունենալով, որ անոր ներքին սպառումը հապի թէ աճի մէջ է:

Ուաշինկթըն յայտնած է, թէ Ռուսիոյ քարիւղի թափ ստացած արտադրութիւնը կրնան օգտակար ըլլալ քարիւղի շուկաներուն, յատկապէս նկատի ունենալով Միջին Արեւելքի մէջ ՕՓԷՔԻ երկիրներէ երբեմն անվստահելի հայթայթումները:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՄՐԵԻԵԼԵԱՆ ԵՐՐՈՊԱ ԱՆՆԱԽՆԵՆԹԱՅ ՈՂՈՂՈՒՄՆԵՐ ՄԻԼԻՍՏՈՒՄՈՐ ՏՈԼԱՐԻ ՎՆԱՄՆԵՐ

ՓՐԱԿԱ՝ ՓՐԿՈՒԵԼՈՒ ԸՆԹԱՅՔԻ ՄԵՋ, ՏՐԵՍԱՆՆ՝ ՎՏԱՆԳՈՒԱԾ



Տրեստըն՝ ջուրերու մէջ «կը լողայ»

Գերմանիոյ Ճյուրանսը եւ մշակութաբան ինչ գոհարը նկատուող Տրեստըն քաղաքը երէկ «կը պատրաստուէր» 150 տարուան իր ամենէն ծանրակշիռ ողողումներուն, մինչ Փրակայէն քաջուղ ջուրերը կը յայտնաբերէին 2-եւ իւրոյ պատմական մայրաքաղաքին արդէն իսկ հասած հսկայական վնասները:

Կեդրոնական Եւրոպայի այլ շրջաններ, որոնց կարգին՝ Սլոնիայի մայրաքաղաք Պրախաւա, ողողումներու գծով իսկապատրաստ վիճակի մէջ կը մնային: Ողողումները՝ Սեւ ծովէն Պարթեան շրջան, առնուալն 85 քմ խլած են, միլիա-

լի կը բարձրանայ: Պաշտօնատարներու նախատեսութեամբ, Էլպ գետին խորութիւնը 8,5 մետրի պիտի բարձրանայ, ինչ որ 31 Մարտ 1845էն ի վեր ամենէն բարձրն է:

Սլոնիայի մայրաքաղաք Պրախաւայի մէջ, պիտուրներ ամրապնդած են ողողումներու դէմ պատնէշները՝ Դանուբի երկայնքին, կառավարութեան կողմէ շրջանին մէջ ստիպողական վիճակի դրութիւն հոշակուելէ ետք:

ՓՐԱԿԱՅԻ ՄԵՋ ԶՈՒՐԵՐԸ ԿԸ ՍԿԱՆՔԱՅՈՒՄ

Մինչ այդ, ջուրերը երէկ սկսած են քաշ-

ւիլ Փրակայէն, ուր իշխանութիւնները Բ. Աշխարհամարտէն ի վեր «տեղահանումի» (մեծագոյն) գործողութեան ձեռնարկած են՝ աւելի քան 200 հազար հոգի հեռացնելով:

Աւստրիոյ իշխանութիւնները եւս յայտնած են, թէ կացութիւնը բարելաւումի

նթացքի մէջ է, ջուրի մակարդակը կ'իջնէ եւ վիեննա վտանգի տակ չի գտնուիր:

Փրակայի մէջ, պաշտօնատարները սկսած են արդէն վնասները գնահատել, մինչ ջուրի «մակարդակը» կ'իջնէր՝ Չորեքշաբթի օրուան գագաթնակէտէն ետք: Վլախա գետի հարկատուներուն մակարդակը սկսած է իջնել: Վլախայի Էլպի մէջ կը թափի:

Նկատի ունենալով, որ պատնէշները կրցած են ընդհանուր առմամբ սանձել ողողումի ջուրերը, չին Քաղաքը չէ վնասուած: Սակայն պաշտօնատարները յայտնած են, թէ այլ շրջաններ վտանգաւոր վիճակի մէջ կը գտնուին՝ քանի մը մետր ջուրերու տակ, պոչազանցելով քանի մը մետր ջուրերու տակ, պոչազանցելով քանի մը մետր ջուրերու տակ:

Կը նախատեսուի, որ Փրակայի մէջ արձանագրած վնասը առնուալն 2 միլիարդ տոլարի հասնի: (ՌՈՅԹԸՐԸ)

ՖՈՒԹՊՈԼ ԼԱԹՎԻԱ - ՀԱՅԱՍՏԱՆ ՄՐՅՈՒՄԸ՝ ՅԵՏԱԶԳՈՒԱԾ

Հայաստանի ֆուտպոլի ֆետերասիոնը մէկ պատասխանատուն երէկ պատասխանատուն երէկ «Ռոյթթըր»-ի հետ իր կատարած հարցազրոյցին ընթացքին յայտնեց, թէ Օգոստոս 21ին Լաթվիոյ դէմ ֆուտպոլի բարեկամական մրցումը, որ տեղի պիտի ունենար Ռիկայի մէջ, ջնջուած է, որովհետեւ Լաթվիա մերժած է վիզա տալ Հայաստանի ազգային խումբի վեց մարզիկներու:

Լաթվիոյ կառավարութիւնը յայտնած է, թէ վեց մարզիկներուն մերժած է վիզա տալ, որովհետեւ անոնք չեն կրցած փաստել, որ Հայաստանեան հպատակութիւն ունին: Վեց մարզիկներն են՝ Ալպէր Մարգիսեան, Անտրէ Մովսիսեան, Անդրանիկ Քարակէլտեան (անոնք երբեք իրենց մօտ ունէին ուսակական անցագիր), ծնունդով արժանիքիցի իսոն Պիլիպիս, պուլկարաւայ Արմէն Համբարձումեան եւ մալիցի Էտել Պեթէ:

Հայաստանի ֆուտպոլի ֆետերասիոնը յայտնեց, թէ իր մէջ կարելի պիտի ընէ յառաջիկային նմանօրինակ դէպքերու

առաջը առնելու համար, յատկապէս Եւրո-2004ի գտնուած մրցաշարի նախօրեակին:

Հայաստան, որ մաս կը կազմէ Զ. խմբակին, իր դէմ պիտի ունենայ

Սպանիան, Հիւսիսային Իրլանտան, Ուրուգուայ եւ Յունաստան: Անոր առաջին մրցակիցը պիտի ըլլայ Ուրուգուայ: Մրցումը տեղի պիտի ունենայ Սեպտեմբեր 7ին, Հայաստանի մէջ:

Balkan Holidays TRANSLITEX TOURS ԴԵՊՈՒ ՎԱՌՆԱ ՇՐՋԱՊՏՈՅՆԵՐՈՒ 36 ՏԱՐՈՒՄԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹԻՒՆ Varna Summer

ԹԵՐԹԻ ՄԸ ՏՆՕՐԵՆԸ ԵՒ ԽՄԲԱԳԻՐԸ ԶԵՐԲԱԿԱԼՈՒԱԾ ԵՆ

ԱՄՄԱՆ, 15 (ՌՈՅԹԸՐԸ).- Յորդանանեան թերթի մը տնօրէնը եւ խմբագիրը ձերբակալուած են Գաթա-րի էմիրին մէկ ծաղրանկարին համար, յայտնեցին պաշտօնատարները եւ դատական աղբիւրները Հինգշաբթի օր:

Սախր Ապու Անազա եւ «ժազիրա» երգիչական շարժաթերթի խմբագիրը՝ Մաամուն Ռուսա ձերբակալուեցան Չորեքշաբթի օր: Անոնք կ'ամբաստանուին արաբական պետութեան մը ղեկավարը անարգելու ու վարկաբեկելու, ինչպէս նաեւ՝ Յորդանան - Գաթար երկկողմանի կապերուն վնասելու յանցանքով:

Ինչորոյ առարկայ երգիչական Ֆաթարի էմիրը՝ շէյխ Համատ Պըն Նախիֆա Սանին կը ներկայացնէր պորտախաղի պարուհիի մը զգեստաւորումով: Երգիչական չրապարակուած էր Յորդանանի մէջ քաթարեան «ժազիրա» պատմիչապիւրի կայանի փակման որոշումին առիթով:

Ամբաստանեալները երեք տարի բանտարկութեան կրնան դատապարտուիլ:

ՓԱԶԻՍՍԱՆ - ՀԼԴԱՍՍԱՆ ՏԱԳԼԱՊ

ՎԱՃՓԱՅԻ ԽԻՍՏ ՌՃՈՎ ԿԸ ՀԱԿԱԴԱՐՁԷ ՄՈՒՇԱՐՐԱՅԻ ԵԼՈՅԹԻՆ



Վաճփայի՝ Գաթաբազակալ պահակազուգի հսկողութեամբ կը կատարէ իր յայտարարութիւնը

ՆԻԻ ՏԵԼԻ, 15 (ՌՈՅԹԸՐԸ).- Հնդկաստանի վարչապետ Սթալ Պեհարի Վաճփայի, Փաքիստանի դէմ չափապանց խիստ ոճով մը, չինգաթթի օր Իսլամապուր ամբաստանած է Քաշմիրի մէջ «սահմանէն անդին ահաբեկչութեան» յանցանքով:

Անոր խօսքը կը յաջորդէր Փաքիստանի նախագահ Փերվիշ Մուշարրաֆի արտասանած խօսքին, որուն ընթացքին ան յայտնած էր, թէ հնդկական Քաշմիրի մէջ Սեպտեմբերին եւ Հոկտեմբերին ընտրութիւններու կայացումը խեղկատակութիւն է:

Երկու երկիրները կը նշէին Բրիտանիայէն անկախութեան 55րդ տարեդարձը. Փաքիստան՝ Չորեքշաբթի օր, Հնդկաստան՝ Հինգշաբթի օր: Վաճփայի Փաքիստանը ամբաստանած է «երկու չափ, երկու կշիռ»-ի քաղաքականութիւն վարելու յանցանքով, արտօնելով իսլամական պիւնեալներու, որ հնդկական Քաշմիր թափանցնէ՝ միանալու համար հնդկական իշխանութեան դէմ 13 տարուան ըմբոստութեան:

Փաքիստան Մ. Նահանգներու կարեւոր մէկ դաշնակիցն է՝ ահաբեկչութեան դէմ անոնց պատերազմին մէջ: Կորիկային ուժ ունեցող 2 դրացիները Յունիսի ետ քաշուած էին պատերազմի «սեմ»էն, Մուշարրաֆի Ուաշինկթընի տրուած խոստումէն ետք, թէ մնալուն կերպով վերջ պիտի տալ հնդկական Քաշմիր թափանցումներուն:

ԸԱԿԱՌԱԿ ՎԵՐՁԻՆ ԵՐՁԱՆԻ ԶՐՏՈՒԹԵԱՆ

ՌԻԱՇԻՆԿԹԸՆ - ՄԵՔՍԻՔԱ ԿԱՊԵՐԸ ԿԸ ՄՆԱՆ ՍԵՐՏ

Կ'ԸՍԵ ՍՊԻՏԱԿ ՏՈՒՆԸ

Մ. Նահանգներու Սպիտակ Տունը երէկ յայտնած է, թէ Մեքսիքայի հետ Ուաշինկթընի կապերը ուժեղ կը մնան, հակառակ Մեքսիքայի նախագահ Կիչէնթէ Ֆոքսի բողոքներուն՝ Թեքսասի մէջ այս քաղաք մեքսիքացի քաղաքացիի մը մահապատիժի ենթարկուելուն դէմ:

Ֆոքս Թեքսաս նախատեսուած այցելութիւն մը ջնջած էր: Ան տեսակցութիւն մը պիտի ունենար նախագահ Ճորձ Պուշի հետ:

Թեքսաս նահանգը մերժած է ընթացք տալ լատին ամերիկեան 12 երկիրներու խնդրանքներուն, ինչպէս նաեւ Սպանիոյ եւ Փորթուգալի խնդրանքներուն, իստիք Սուարէս Մետինիայի կեանքը փրկելու համար:

Սուարէս Չորեքշաբթի օր մահապատիժի ենթարկուած էր 1988ին Տայասի մէջ ոստիկան սպաննած ըլլալու յանցանքով:

(ՌՈՅԹԸՐԸ)